ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**2 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1170 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 29-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված կենցաղային սարքավորումները (գազօջախ՝ 24 հատ, էլեկտրական վառարան՝ 300 հատ, լվացքի մեքենա՝ 24 հատ, 348 տեղ, 5,526 կգ ընդհանուր քաշով, 20,952 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա, 2015 թվականի հունվարի 26-ի N Մ-006-Ա և հոկտեմբերի 7-ի N Մ-1109-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**2 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1171 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 30-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված վարդակակաչի սոխուկները (27 տեղ, 13,695 կգ ընդհանուր քաշով, 35,788.10 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 5,190 եվրո, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Ս-1109-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա, 2015 թվականի հունվարի 26-ի N Մ-006-Ա և հոկտեմբերի 7-ի N Մ-1109-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1172 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1005-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի նոյեմբերի 2-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «ՖաբԼաբ արհեստանոց-լաբորատորիա» ծրագրի մասին» N Մ-1005-Ա (2015 թվականի հունվարի 30-ի N Մ-061-Ա և մայիսի 15-ի Մ-507-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի «112,550,000 դրամ» բառերը փոխարինել «130,100,000 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված լազերային հաստոցը (մեկ տեղ, 316 կգ ընդհանուր քաշով, 40,132.85 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ փոխադրման ծախսերը կազմել են 960 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
**«Այբ» կրթական հիմնադրամի**
Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյանի կողմից
30 հոկտեմբերի, 2015թ.

## «ՖաբԼաբ» արհեստանոց-լաբորատորիա
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրով նախատեսվում է «Այբ» ավագ դպրոցին կից ստեղծել «ՖաբԼաբ» արհեստանոց-լաբորատորիա: «ՖաբԼաբ»-ը հատուկ սարքավորումներով համալրված արհեստանոց-լաբորատորիա է, որը թույլ է տալիս մեկական օրինակով ստեղծել գրեթե ցանկացած իր կամ մշակում: Դպրոցում «ՖաբԼաբ»-ը հնարավորություն կտա մարմնավորել, փորձարկել և զարգացնել աշակերտների մտահղացումները ռոբոտիկա, ֆիզիկա, տեխնոլոգիա, մեխանիկա և այլ առարկաներից: «ՖաբԼաբ»-երը մշակվել են Մասաչուսեթսի Տեխնոլոգիական Ինստիտուտի (MIT) կողմից և այժմ ակտիվ տարածվում ու ցանցավորվում են աշխարհում՝ հիմնադրվելով հիմնականում կրթական հաստատություններում: Ստեղծվելիք «ՖաբԼաբ»-ը կլինի առաջինը տարածաշրջանում: «ՖաբԼաբ»-ը հանդիսանում է «Այբ ավագ դպրոց» ծրագրի շարունակությունը, որը որակվել է բարեգործական ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ՝ 09.11.2012թ. N Մ - 893 – Ա, 07.06.2013թ. N Մ-436-Ա և 06.12.2013թ. N Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ: Այն ստեղծվում է ի կատարումն ՀՀ կառավարության թիվ 50Ա առ 14.01.2010թ. որոշմամբ ամրագրված «Այբ կրթական հանգույց» ծրագրի:<br>**Ծրագրի անհրաժեշտությունը**<br>21-րդ դարում երկրի մրցունակության ապահովման կարևորագույն գործոնը որակյալ կրթությունն ու լայն հնարավորություններն են: Նման կրթություն, հնարավորություններ տալու, ուսյալ, առաքինի, ապագան կերտելու պատրաստ սերունդ ձևավորելու նպատակով էլ ստեղծվել է «Այբ» դպրոցը: «ՖաբԼաբ»-ը կոչված է նոր որակ հաղորդել կրթությանը՝ կիրառական դարձնելով այն: Ստեղծելով «ՖաբԼաբ» Հայաստանը դառնում է մեծ միջազգային կրթական ցանցի անդամ՝ մուտք ստանալով դեպի նոր տեխնոլոգիաներ, գիտելիք և փորձ:<br>Հանդիսանալով ոչ առևտրային կազմակերպություն՝ «Այբ»-ն իր գործունեությունն ու զարգացումն ապահովում է բարերարների նվիրատվությունների հաշվին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակը Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի դրույթների: Մասնավորապես՝ ծրագրի շրջանակներում Հիմնադրամի սեփական միջոցների և հանգանակությունների հաշվին արտերկրից ներմուծվող և ՀՀ-ի տարածքում ձեռքբերվող տեխնոլոգիաների, փորձաքննական, |

| | | |
|---|---|---|
| | | շինարարական աշխատանքների և շինանյութերի, սարքավորումների, կապուղիների, կահույքի, տեխնիկայի ազատումը մաքսային պարտադիր վճարումներից և ԱԱՀ-ից: |
| 3. | Բարեգործը | «Այբ» կրթական հիմնադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամը, որի տվյալներն են՝<br>▪ ՀՎՀՀ 01558429<br>▪ Հասցեն՝ Երևան 0009, Կորյունի 19ա<br>▪ Հաշվարկային հաշիվ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ 005-053483-001<br>▪ Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյան:<br>«Այբ» կրթական հիմնադրամի իրականացրած<br>1. «Այբ ավագ դպրոց» ծրագրի շրջանակներում Երևանի Այբ դպրոցի («Այբ կրթական հանգույց» հիմնադրամի) շինարարության, սարքավորումների և նյութերի ներմուծման, տպագիր և էլեկտրոնային նյութերի ձեռքբերման ծրագիրը <u>ոռակվել է բարեգործական</u>՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ՝ 09.11.2012թ. N Մ - 893 – Ա, 07.06.2013թ. N Մ-436-Ա և 06.12.2013թ. N Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ:<br>2. «ԱյբԼաբ» ծրագրի շրջանակներում Երևանի Ֆիզմաթ դպրոցի ֆիզիկայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը <u>ոռակվել է բարեգործական</u>՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 14-ի N Մ-851-Ա որոշմամբ:<br>3. «ԱյբԼաբ-ուսումնական առարկայական լաբորատորիաներ-Վաղարշապատ» ծրագրի շրջանակներում Վաղարշապատի Խ. Աբովյանի անվ. # 4 հիմնական դպրոցի քիմիայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը <u>ոռակվել է բարեգործական</u>՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. հուլիսի 27-ի N Մ-626-Ա որոշմամբ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսվում է Երևանում՝ Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում:<br>Ծրագրի բնագավառը՝ հանրակրթություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 130՛100՛000 (Մեկ հարյուր երեսուն միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ներառում է շինմոնտաժային աշխատանքներ, սարքավորումների, տեխնիկայի ծախսերը և ծրագրի կազմակերպման ընդհանուր ծախսեր՝ այդ թվում աշխատավարձ և վարչական ծախսեր : |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողը ք. Երևան Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում տեղակայված **«Այբ կրթական հանգույց» հիմնադրամն** է: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 2014թ. սեպտեմբերի 15, ավարտը՝ 2015թ. դեկտեմբերի 31, տևողությունը՝ 15.5 ամիս: |

<table>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>Ծրագիրը նախատեսում է «Այբ» ավագ դպրոցին կից «ՖաբԼաբ»-ի շինմոնտաժային աշխատանքներ, կահավորում, սարքավորումներով և տեխնիկայով հագեցում:<br>Աշխատանքները կավարտվեն 2015թ. դեկտեմբերին:<br>Նկարագրված աշխատանքներն իրականացնելու են համապատասխան ոլորտներում մասնագիտացած կազմակերպությունները, ինչպես նաև «Այբ» կրթական հիմնադրամը:<br>Միջոցառումների ծախսերը կկազմեն 125՛600՛000 (Մեկ հարյուր քսանհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որից Շինմոնտաժային աշխատանքներ, կահավորում 45՛600՛000 (քառասունհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, Սարքավորումներ/Տեխնիկա – 80՛000՛000 (Ութսուն միլիոն) ՀՀ դրամ:</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետևյալ ապրանքների և ծառայությունների ձեռքբերում.
<table>
<tr><th></th><th>'000 AMD</th></tr>
<tr><td>ԸՆԴԱՄԵՆԸ (Հազար ՀՀ դրամ)</td><td>125,600</td></tr>
<tr><td>ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ,ԿԱՀԱՎՈՐՈՒՄ</td><td>45,600</td></tr>
<tr><td>Նախագծում, վերահսկողություն</td><td>3,600</td></tr>
<tr><td>Շինմոնտաժային աշխատանքներ</td><td>35,000</td></tr>
<tr><td>Կահավորում</td><td>7,000</td></tr>
<tr><td>ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՏԵԽՆԻԿԱ</td><td>80,000</td></tr>
<tr><td>Այդ թվում՝</td><td></td></tr>
<tr><td>ՀՀ-ից</td><td>6,000</td></tr>
<tr><td>Ներմուծում</td><td>74,000</td></tr>
</table></td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ընդհանուր ծախսերը կազմում են՝ 4՛500՛000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից.<br>Ծրագրային աշխատավարձ –3՛700՛000 դրամ<br>Ծրագրային վարչական ծախսեր – 800՛000 դրամ
<table>
<tr><th>Հաստիք</th><th>Ամսական աշխատավարձի ֆոնդ՝ ներառյալ հարկերը<br>'000 AMD</th><th>Ամբողջ ծրագրի ըակնացման ընթացքում աշխատավարձի ֆոնդ՝ ներառյալ հարկերը<br>'000 AMD</th></tr>
<tr><td>ԸՆԴԱՄԵՆԸ (Հազար ՀՀ դրամ)</td><td>569,2</td><td>3,700</td></tr>
<tr><td>Ծրագրի ղեկավար</td><td>423,2</td><td>2,750</td></tr>
<tr><td>Օգնական</td><td>146</td><td>950</td></tr>
</table></td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսված է համագործակցել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ա) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:<br>բ) «Այբ»-ը կրթական հիմնադրամ է՝ ոչ առևտրային կազմակերպություն, և իր գործունեությամբ հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին ու վերահսկվում է նրա կողմից: «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են.<br>1. Տեր Մեսրոպ քհն Արամյան, նախագահ (Հայաստան)<br>2. Լևոն Ղազարյան (ԱՄՆ)<br>3. Դավիթ Յան(ԱՄՆ, Ռուսաստան)<br>4. Կարեն Մուսաելյան (ԱՄՆ)<br>5. Արտաշես Չիրիկյան (Հայաստան, Ռուսաստան)<br>6. Աշոտ Թումասյան (Ռուսաստան):<br><br>Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կտրվի ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: |

Ի լրումն մեր 2015 թվականի նոյեմբերի 5-ի
N 15/15.9/18937-15 ելից

11 նոյեմբերի 2015թ.

No 15/15-9/19194-15

ՈՒՂՂՈՒՄ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 5-ի N Մ-1172-Ա որոշման 2-րդ կետում «316 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «500 կգ ընդհանուր քաշով» բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1173 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 29-ի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է**.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ ավագ դպրոց» ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա, 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-436-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 6-ի Մ-1194-Ա, 2014 թվականի հոկտեմբերի 3-ի Մ-1003-Ա և 2015 թվականի հունվարի 30-ի Մ-059-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի «տեղեկատվական համակարգեր/ուսումնական ծրագրեր» բառերը փոխարինել «տեղեկատվական համակարգեր/ուսումնական ծրագրեր/նյութեր և ռեսուրսներ» բառերով:

2. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ուսումնական նյութերը (141 կգ ընդհանուր քաշով, 228,648.24 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ու Մ

**5 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1174-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի N Մ-664-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 30-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-664-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «1,044,000,000 դրամ» բառերը փոխարինել «1,086,982,417 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի երկրորդ պարբերությունում «կառուցման, տարածքի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 833,699,335 դրամի չափով» բառերը փոխարինել «կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 860,199,480 դրամի չափով» բառերով

3) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝



1) «Ջեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2015 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզադպրոցի համար կահույքի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 7,629,450 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00886666) 2015 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզադպրոցի տարածքի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 12,779,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված մարզագույքը և մարզասարքերը (մեկ տեղ, 1,200 կգ ընդհանուր քաշով, 12,174.69 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 660,000 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«29» հոկտեմբերի 2015 թ.

«Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վանաձորի տարածաշրջանում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման և մասսայականացման նպատակով Վանաձոր քաղաքի Տարոն 4 թաղամասի Սեբաստիա փողոցի թիվ 2/4 հասցեում ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև) և Ֆուտբոլի ասոցացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Վանաձոր քաղաքում, սպորտի բնագավառում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,086,982,417 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915)՝ ի դեմս Վանաձոր քաղաքի Տարոն 4 թաղամասի Սեբաստիա փողոցի թիվ 2/4 հասցեում կառուցվող Ֆուտբոլի մանկա-պատանեկան մարզադպրոցի |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2014 թվականի հունիսի 27-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Մարզադպրոցի կառուցման ընդհանուր շինարարական և տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 690,721,887 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2014 թվականի հունիսի 27-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>2. Ջեռուցման, օդափոխության և անվտանգության համակարգերի նախագծման, կառուցման ու սարքավորումների մոնտաժման աշխատանքներ՝ 59,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2014 թվականի հունիսի 27-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>3. Կահավորման աշխատանքներ՝ 7,629,450 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2015 թվականի մայիսի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>4. Խաղադաշտերի կառուցում՝ 161,500,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2014 թվականի հունիսի 27-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>5. Շինարարական նյութերի, ներքին հարդարման պարագաների, արտաքին լուսա-վորության սարքավորումների, մարզագույքի, խաղադաշտերի խնամքի սարքավորումների, խոտի սերմի և պարարտանյութերի ներմուծում՝ 168,131,080 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2014 թվականի հունիսի 27-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - մարզադպրոցի կառուցման հողային աշխատանքների իրականացում՝ 123,456,727 դրամ,<br>- կառուցման շինարարական և ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 300,755,983 դրամ,<br>- ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծման, կառուցման ու սարքա-վորումների մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 53,000,000 դրամ,<br>- անվտանգության համակարգերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 6,000,000 դրամ<br>- մարզադպրոցի և տարածքի էլեկտրասնուցման և արտաքին լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 25,700,000 դրամ,<br>- մարզադպրոցի տարածքի ասֆալտապատման, բարեկարգման, ցանկապատման և պարսպապատման աշխատանքների իրականացում՝ 151,809,177 դրամ,<br>- խորքային հորի, պոմպակայանի, ջրամբարի և ոռոգման համակարգերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 89,000,000 դրամ,<br>Նախատեսվում է կառուցել նաև չորս ստանդարտ չափսերի խաղադաշտ՝ 161,500,000 դրամ:<br>Մարզադպրոցի կահավորման աշխատանքների իրականացում՝ 7,629,450 դրամ:<br>Շինանյութի և ներքին հարդարման պարագաների՝ 35,000,000 դրամ, արտաքին լուսավորության սարքավորումների՝ 57,500,000 դրամ, մարզագույքի՝ 7,381,080 դրամ, խաղադաշտի խնամքի սարքավորումների՝ 2[illegible],250,000 դրամ, խոտի սերմի և պարարտանյութերի՝ 40,000,000 դրամ ներ[illegible] |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Վանաձորի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ [illegible] իրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության [illegible] ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ |

Կազմեց ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան ______________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1175-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1033-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 30-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ստեփան Շահումյանի անվան մարզադաշտի և ենթակառույցների վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-1033-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «224,954,928 դրամ» բառերը փոխարինել «225,195,075 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինտերսպորտ» ՍՊԸ-ի հետ (Վրաստանի Հանրապետություն, քաղ. Գորի, Սաակաձե 5, ՀՎՀՀ՝ 417876926) 2015 թվականի հունիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղադաշտի արհեստական խոտածածկի տեղադրման



աշխատանքների իրականացում՝ 29,361 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) կվարցային ավազ՝ 125 տոննա ընդհանուր քաշով, 10,000 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

2) սպորտային պարագաներ, սարքավորումներ և նյութեր՝ մեկ տեղ, 1,747.4 կգ ընդհանուր քաշով, 6,682.40 ԱՄՆ-ի դոլար արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«29» նոյեմբերի 2015թ.

«Ստեփան Շահումյանի անվան մարզադաշտի և ենթակառույցների վերակառուցում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացման նպատակով Ստեփան Շահումյանի անվան մարզադաշտի և ենթակառույցների վերակառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Ստեփանակերտ քաղաքի Ն. Ստեփանյան 44 հասցեում սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 225,195,075 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Արհեստական խոտածածկի, անհրաժեշտ սարքավորումների և նյութերի ներմուծում՝ 80,201,682 դրամ ընդհանուր արժողությամբ, սեպտեմբերի 7-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը:<br>2. Մարզադաշտի և ենթակառույցների վերակառուցման աշխատանքների իրականացում 131,046,918 դրամ՝ 2015 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը:<br>3. Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքներ՝ 13,946,475 դրամ, 2015 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Հողային աշխատանքներ, դրենաժային համակարգով մարզադաշտի կառուցում, շինությունների հատակի վերանորոգում, ներքին հարդարում, էլեկտրամոնտաժային և սանտեխնիկական աշխատանքներ, ծածկի, փոխարժեքների, պատուհանների, և աստիճանավանդակի պատրաստում՝ 131,046,918 դրամ.<br>- Արհեստական խոտածածկի՝ 78,282.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ներմուծում.<br>- Խաղադաշտի արհեստական խոտածածկի ռետինե գնդիկների՝ 47,673.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ներմուծում.<br>- Մարզադաշտի լուսադիոդային ցուցատախտակի՝ 26,574 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 4,894 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը, ներմուծում.<br>- Կվարցային ավազի՝ 10,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ներմուծում.<br>- Սպորտային պարագաների, անհրաժեշտ սարքավորումների և նյութերի՝ 6,682.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ.<br>- Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքներ՝ 29,361 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Ստեփանակերտի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության գնահատման վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**06 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1176-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N Մ-527-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 3-ի N 1/06.2/12326-15 գրությունը և 2015 թվականի նոյեմբերի 4-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.05.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի ծրագրի մասին» N Մ-527-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից ձեռք բերված ամենագնաց 2 ավտոմեքենաները (2013 թվականի արտադրության, «TOYOTA HILUX 2.5 TD» մակնիշի, նույնականացման համարը՝ MROFR22GXD0628144, 8,444,300 դրամ արժեքով, ներառյալ փոխադրման **և այլ** ծախսերը ու 2012 թվականի արտադրության, «Mitsubishi L200 2.4l» մակնիշի, նույնականացման համարը՝ MMBJNKB50[illegible]54260, 8,[illegible]4,800 դրամ արժեքով, ներառյալ փոխադրման **և այլ** ծախսերը) ներմուծ[illegible] ն[illegible] որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույ[illegible] որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի [illegible] կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի [illegible] Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի ժ/պ
__________ Խ.Աղաբեկյան
«_28_» հոկտեմբերի 2015թ.

# ԾՐԱԳԻՐ

ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում 2015 թվականի ընթացքում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Կովկասի Բնության Հիմնադրամ, Ծուպլենինֆաշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Տավուշի մարզ, ք.Դիլիջան<br>«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» |
| 6. | Ծրագրի բյուջեն | Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համար «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ 32 100.0 հազ.դրամ): Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10.04.2015թ. – 31.12.2015թ. |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի ծրագիր՝ 15.04.2015թ. – 31.12.2015թ. – **32 100.0 հազ.դրամ,** այդ թվում՝ |

1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում /3-4-րդ եռամսյակ/ – **1 224.60 հազ.դրամ,** այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| 1. Բենզին, ռեգուլյար | լիտր | 3140 | 1224.6 |

2. Տրանսպորտային սարքավորումների ներմուծում և ձեռքբերում /3-րդ եռամսյակ/ – **28 584.0 հազ.դրամ,** այդ թվում

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| 1.Ամենագնաց մեքենա (ներմուծում) | դրամ | 2 | 16 509.1 |
| 2.Տրակտոր (ձեռքբերում) | դրամ | 1 | 12 074.9 |

3. Հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերում /2-րդ եռամսյակ/ – **900.0 հազ.դրամ,** այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ.) |
|---|---|---|---|
| 1.Մետաղական ցանկապատ | դրամ | 1 | 900.0 |

4. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում /3-րդ եռամսյակ/ – **455.4 հազ.դրամ,** այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ.) |
|---|---|---|---|
| 1.Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | դրամ | 1 | 455.4 |

5. Վարչական սարքավորումներ /2-րդ եռամսյակ/ – **470.0 հազ.դրամ,** այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ.) |
|---|---|---|---|
| 1.Սեղանի համակարգիչներ | դրամ | 1 | 470.0 |

6. Նախագծահետազոտական ծախսեր /2-րդ եռամսյակ/ – **466.0 հազ.դրամ,** այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ.) |
|---|---|---|---|
| 1.Վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախագծի կազմում | դրամ | 1 | 466.0 |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **1 224.6 հազ.դրամ,**<br>2. Տրանսպորտային սարքավորումների ներմուծում և ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում, ներմուծման մասով նաև մաքսատուրքից ազատում)– **28 584.0 հազ.դրամ:**<br>3. Հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)– **900.0հազ.դրամ:** |

| | | |
|---|---|---|
| | | 4. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **455.4 հազ.դրամ:**<br>5. Վարչական սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **470.0 հազ.դրամ:**<br>6. Նախագծահետազոտական ծախսեր (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **466.0 հազ.դրամ:** |
| **11.** | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| **12.** | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Տավուշի մարզպետարանի, Դիլիջանի քաղաքապետարանի և ՀՀ բնապահպանության նախարարության հետ |
| **13.** | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը |

ՏՆՕՐԵՆ Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**6 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1177 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒ-ԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի նոյեմբերի 5-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված երկու հատ տրանսֆորմատորի (7,160 կգ ընդհանուր քաշով, 1,144,560 ռուսական ռուբլի արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 791,175 դրամ, «Արարատյան» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648- (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և N Մ-888-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**9 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1178 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի նոյեմբերի 5-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված վարդակները և էլեկտրական հոսանքի պլաստմասե ամրակային մասերը (մեկ տեղ, 90 կգ ընդհանուր քաշով, 4,010.34 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա, փետրվարի 25-ի N Մ-153-Ա, օգոստոսի 28-ի N Մ-911-Ա և հոկտեմբերի 2-ի N Մ-1051-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1179 - Ա**

**քաղ. Երևան**

**«ԽՈՒՍՏՈՒՓ ՓՐԿԱՐԱՐ ՋՈԿԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 07/80-2/34705-15 և նոյեմբերի 12-ի N 06/3-3/34774-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 1/02.3/16685-15 ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 01/5597-15,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Ալիկ Օնիկի Հարությունյանի միջոցներով ձեռք բերված և որպես օժանդակություն «Խուստուփ փրկարար ջոկատ» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված «LAND ROVER Discovery» մակնիշի ավտոմեքենայի (2000 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ SALLT-AM23YA268212, 1,895 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 675 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը: Ավտոմեքենան ծառայելու է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարածքում փրկարարական և որոնողափրկարարական աշխատանքները իրականացնելու համար:

2. «Խուստուփ փրկարար ջոկատ» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1180 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 9 ԴՊՐՈՑԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 4-ի N 07/80-2/33594 -15 և նոյեմբերի 3-ի N 06/3-3/33372-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 4-ի N 02/14/13579-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 81,340,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի թիվ 9 դպրոցի ամբողջական կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N ԼՂ-Կ-Հ-02/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի թիվ 9 դպրոցում՝ 81,340,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«29» նոյեմբերի 2015թ.

**«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի**
**թիվ 9 դպրոցի ամբողջական կահավորում »**

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել մեր կողմից ներկայումս հիմնանորոգվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի թիվ 9 դպրոցը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ, ֆիզիկական և իրավաբանական անձիք |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է՝ 81.340.500,00 դրամ: |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքի թիվ 9 դպրոցը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հոկտեմբերի 23-ից մինչեւ 2016թ. դեկտեմբերի 23-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ հոկտեմբերի 23-ից մինչեւ 2016թ. դեկտեմբերի 23-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքիթիվ 9 դպրոցի կահավորում՝ 81.340.500,00 ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 81.340.500,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1181 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆԻ ԲԵՋԻԿՅԱՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» (2-ՐԴ ՓՈՒԼ) ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 28-ի N 07/80-2/32500-15 և հոկտեմբերի 23-ի N 06/3-3/32020-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 27-ի N 02/14/13112-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 27-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/9462-15 ու Երևանի քաղաքապետի 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 02/34-56758Հ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող՝ 100,000,000 դրամ արժեքով «Անի Բեգիկյան» երիտասարդական կենտրոն» (2-րդ փուլ) ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից (ՀՀ, Գյումրի, Չարենցի 6, ՀՎՀՀ՝ 05513266) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«ՀՈՒՆ-ՍԱՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536528) 2015 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված N 04/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Թբիլիսյան խճուղի 19/1 հասցեում գտնվող երիտասարդական կենտրոնի 2-րդ մասնաշենքի վերանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 63,781,680 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Երևանի քաղաքապետին:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

14/2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Անարատ Հղության ՀՔ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանի
Մեծավորուհի Տիգրանուհի (քույր Արուսյակ)
Մարջոնյանի կողմից

[signature]

__ հոկտեմբերի 2015թ

## «ԱՆԻ ԲԵՋԻԿՅԱՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
## ԾՐԱԳՐԻ 2-ՐԴ ՓՈՒԼ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Յուրաքանչյուր տարի Տիրամայր Հայաստանի Կուսաստանի սաներից առնվազն 3-4 հոգի ընդունվում են Երևանի տարբեր ԲՈՒՀ-եր: Սովորելու ընթացքում սաները ունենում եմ դժվարություններ Երևանում ապրելու հարցում: 2013թ. իտալահայ բարերար Ալեքքո Պեզիքեանի բարերարության շնորհիվ Երևան Թբիլիսյան 19 հասցեում կառուցվեց և այժմ գործում է «Անի Բեզիկյան» («Անի Պեզիքեան») Երիտասարդական կենտրոնն, ուր այժմ ապրում են մարզերից եկած անապահով ընտանիքների 20 ուսանող:<br>Բարերարը, ցանկանալով ավելի շատ ուսանողների ընդգրկել այս կենտրոնում, 2014թ. գնեց և Տիրամայր Հայաստանի Կուսաստանին նվիրեց կենտրոնի անմիջական հարևանությամբ գտնվող Թբիլիսյան 19/1 տունը: Ծրագրով նախատեսվում է ՏՀԿ սաների, ինչպես նաև՝ այլ մարզերից եկած և լավ սովորող ուսանողների համար այս տունը վերածել «Անի Բեզիկյան» («Անի Պեզիքեան») երիտասարդական կենտրոնի 2-րդ մասնաշենքի, ուր լրացուցիչ ևս 30 ուսանող կապրեն ուսումնառության ընթացքում: Այնտեղ կստեղծվեն բոլոր կոմունալ-կենցաղային պայմանները, որպեսզի ուսանողները իրենց ուշադրությունը կենտրոնացնեն ուսման վրա: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ամբողջ ծրագիրը ֆինանսավորում է իտալահայ բարերար Ալեքքո Պեզիքեանը: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Անարատ Հղության ՀՔ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանը *(հասցե՝ Գյումրի, Ե.Չարենցի 6; ՀՎՀՀ 05513266)*. |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաք Թբիլիսյան 19/1 տուն հասցեում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | • տան վերանորոգում և տարածքի բարեկարգում-մոտ 85 միլիոն դրամ<br>• կահավորում- 15 միլիոն դրամ<br><u>Ընդամենը՝ 100'000'000 դրամ:</u> |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ամեն տարի ծրագրից կօգտվեն Հայաստանի տարբեր մարզերի անապահով ընտանիքների 17-25 տարեկան մոտ 30 երիտասարդներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է, այժմ որակավորման է ներկայացնում 2015-2016 թվականներին իրականացվելիք ծրագիրը; |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>➢ 2015թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիս՝ կենտրոնի 2-րդ մասնաշենքի վերանորոգում 63'781'680 դրամ<br>➢ 2016թ. ապրիլ-մայիս – տարածքի բարեկարգում՝ 21'218'320<br>➢ 2016 թ. հունվար-հուլիս ամիս՝ կահավորում, մոտ 15 միլիոն դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>➢ վերանորոգում, որի համար արդեն կնքվել է շինարարական կապալի թիվ 04/15 պայմանագիր մրցույթի հաղթող «ՀունՄավ» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրի արժեքն է 63'781'680 դրամ<br>➢ տարածքի բարեկարգում, որի համար կպահանջվի մոտ 21'218'320 դրամ<br>➢ անհրաժեշտ կահույքի, կենտրոնի բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ կոմունալ-կենցաղային սարքերի ու սարքավորումների գնում: Նախատեսվում է գնել մոտ 15 միլիոն դրամի կահույք, սարքեր ու սարքավորումներ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Շիրակի մարզպետարանի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության գնահատման, վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարի կողմից: Այդ նպատակով նա պետք է ներգրավի ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Վերահսկողություն կիրականացվի նաև ՀՀ սոցիալական և աշխատանքի նախարարության, հարկային մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1182 -Ա**

**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ԵՎ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 4-ի N 07/80-2/33583-15 և նոյեմբերի 3-ի N 06/3-3/33371-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 2-ի N 02/14/13450-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 2-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/9690-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Զաքարիա Սարկավագ Քանաքեռցու 129/5, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 5,353,690 դրամ արժողությամբ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի սանհանգույցի և հանդերձարանի հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Օջախ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04417737) 2015 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված N 15-7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սանհանգույցի և հանդերձարանի հիմնանորոգում՝ 5,042,690 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
"Կամրջակ" սոցիալ բարեգործական հասարակական
կազմակերպության տնօրեն Բ. Աղամալյանի կողմից

29.10.2015 թ.

## Ծրագիր
## «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի սանհանգույցի և հանդերձարանի հիմնանորոգման ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղում գտնվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի ձիաբուժության համար նախատեսված սանհանգույցի և հանդերձարանի հիմնանորոգում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | STICHTING KOM OVER EN HELP հասարակական կազմակերպություն, Նիդրլանդներ Տնօրեն Պարոն KARST DE VRIES:Հասցե Post box 138-3860AC Nijkerk: |
| 4. | Ծրագրի կատարողը | "Կամրջակ" սոցիալ բարեգործական հասարակական կազմակերպություն (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Զ. Սարկավագի 129/5, ՀՎՀՀ՝ 01003187, հեռ՝ 516-044 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, Նոր Խարբերդ գյուղ, «Խարբերդի մասնագիտացված Մանկատուն» ՊՈԱԿ: Բնագավառը՝ սոցիալական : |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում 5,353,690 (հինգ միլոն երեք հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր իննսուն) դրամ : |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ (ՀՎՀՀ՝ 03801255. հեռ՝ 023660025, Մասիս ԱՇԻԲ բանկ ՀՀ-247290001004) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 25.09.2015-ից մինչև 27.12.2015թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Շինարական աշխատանքների իրականացման համար կնքվել պայմանագիր «ՕԶԱԽ» ՍՊԸ ի հետ 5,042,690 (հինգ միլոն քառասուներկու հազար վեց հարյուր իննսուն)դրամ: Հեղինակային հսկողության և նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմումի համար կնքվել է պայմանագրեր «Գ.Վ Շիննախագիծ» ՍՊԸ հետ՝ 200,000 (երկու հարյուր հազար) դրամ և 25000(քսանհինգ հազար)դրամ չափով և 86000 (ութսունվեց հազար) դրամի չափովվ՝ «ԱՐՄԱՆ -ԹԱՄԱՆ» ՍՊԸ-ի հետ շինարարության տեխնիկական հսկողության համար, որոնք աշխատում են առանց ԱԱՀ-ի: Միջոցառումները կկատարվեն 29.10.2015-ից մինչև 27.12.2015թ. |
| 10. | Ձեռք բերվող,ներմուծվող,ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը ,ծավալները և նախատեսվող գինը | Շինարական աշխատանքների իրականացման համար կնքվել պայմանագիր «ՕԶԱԽ» ՍՊԸ ի հետ 5,042,690 (հինգ միլոն քառասուներկու հազար վեց հարյուր իննսուն)դրամ: Հեղինակային հսկողության և նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմումի համար կնքվել է պայմանագրեր «Գ.Վ Շիննախագիծ» ՍՊԸ հետ՝ 200,000 (երկու հարյուր հազար) դրամ և 25000(քսանհինգ հազար)դրամ չափով և 86000 (ութսունվեց հազար) դրամի չափովվ՝ «ԱՐՄԱՆ -ԹԱՄԱՆ» ՍՊԸ-ի հետ շինարարության տեխնիկական հսկողության համար, որոնք աշխատում են առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը,պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականցման ընթացքում համագործակցելու ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրինության կողմից և աշխատանքները կատարելուց հետո Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն: |

Տնօրեն՝ Բ. Աղամալյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1183 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 30-ի N 07/80-2/32956-15 և հոկտեմբերի 32978 -ի N 06/3-3/ -15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 28-ի N ԱՄ/22.2/12471-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված Ազաթիոպրին դեղորայքը (70 տուփ, մեկ տեղ, 4.87 կգ ընդհանուր քաշով, 2,177 եվրո արժողությամբ, որից փոխադրման ծախսերը կազմում են 31.61 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1184 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 30-ի N 07/80-2/32958-15 և հոկտեմբերի 29-ի N 06/3-3/32818-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N ԱՄ/22.2/12496-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի Էլեոնորեն հիմնադրամ-Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված լաբորատոր ախտորոշիչ հավաքածուն (2 տեղ, 27.50 կգ ընդհանուր քաշով, 750 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 486 շվեյցարական ֆրանկ, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1185 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 4-ի N 07/80-2/33464-15 և նոյեմբերի 3-ի N 06/3-3/33438-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 4-ի N ԱՄ/22.2/12729-15 եզրակացություն-ները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բժշկական պարագաները և դեղարայքը (35 տեղ, 2,620 կգ ընդհանուր քաշով, 87,341 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, որից փոխադրման ծախսերը կազմում 5,220 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառա-վարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1186 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 3

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 07/80-2/34047-15 և նոյեմբերի 4-ի N 06/3-3/33482-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N ԱՄ/22.2/12819-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի ՍԵՄՌԱ Պյուս հիմնադրամի կողմից Laboratorium and Gross Apotheke Dr G. Bichsel AG կազմակերպության միջոցով «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված ֆենոբարբիտալ դեղամիջոցը (200 սրվակ, 301.35 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 44.00 շվեյցարական ֆրանկ, ՄՓ և ՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1187 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-009-Ա ԵՎ N Մ-010-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 30-ի N 07/80-2/33002-15 ու նոյեմբերի 2-ի N 03/3-3/33158-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N ԱՄ/22.2/12494-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 30-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/9634-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված հաշմանդամի սայլակները և նրանց պահեստամասերը (561 տեղ, 12,280.20 կգ ընդհանուր քաշով, 106,639 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 3,789 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բժշկական պարագաների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական

հաստատություններին» N Մ-009-Ա ու «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» N Մ-010-Ա (2015 թվականի օգոստոսի 12-ի N Մ-843-Ա որոշման խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

14/5.12

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ) 14/5.12

Կոնտեյների համարն է՝ **CAIU 830737-7**: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 106639.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 3789.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 12280,2 կգ, տեղերի քանակը 561:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 50<br>18 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **9614.33**<br>**77.76** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 50<br>20 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **9614.33**<br>**86.40** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Տավուշի տարածաշրջան) |
| 50<br>20 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **9614.33**<br>**86.40** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 25<br>9 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **4807.17**<br>**38.88** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 50<br>18 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **9614.33**<br>**77.76** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 50<br>18 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **9614.33**<br>**77.76** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |
| 50<br>18 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **9614.33**<br>**77.76** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 50<br>18 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **9614.33**<br>**77.76** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 50<br>18 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **9614.33**<br>**77.76** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 25<br>9 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **4807.17**<br>**38.88** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 25<br>9 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **4807.17**<br>**38.88** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 15<br>8 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **2884.30**<br>**34.56** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| 60<br>21 | Հատ<br>Հատ | Հաշմանդամի սայլակ<br>Սայլակի պահեստամասեր | | **11537.27**<br>**90.72** | Մ-009-Ա Բժշկական պարագաների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 12280,2 | 106639.00 | |

02523755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

02523755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1188 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 4-ի N 07/80-2/33461-15 ու նոյեմբերի 5-ի N 03/3-3/33675-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 2-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/9689-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված ռետինե կոշիկները (250 տեղ, 4,115 կգ ընդհանուր քաշով, 7,273 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 4,773 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» N Մ-010-Ա (2015 թվականի օգոստոսի 12-ի N Մ-843-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)**

Կոնտեյների համարն է՝ MRKU 6879879: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 7273.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 4773.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 4115.00 կգ, տեղերի քանակը 250:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Տավուշի տարածաշրջան) |
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 400 | զույգ | Ռետինե կոշիկ | | **581.84** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 600 | զույգ | Ռետինե կոշիկ | | **872.76** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 4115.00 | 7273.00 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1189 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ) N 2

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 9-ի N 07/80-2/34070-15 ու նոյեմբերի 5-ի N 03/3-3/33799-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2015 թվականի ~~նոյեմբերի 5-ի N~~ ՖԲ/ԱնՄ-2-1/9739-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված շապիկները (379 տեղ, 3,299.60 կգ ընդհանուր քաշով, 154,209 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 4,209 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» N Մ-010-Ա (2015 թվականի օգոստոսի 12-ի N Մ-843-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

14/5.14

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

14/5.14

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)**

Կոնտեյների համարն է՝ DFSU 725443-8: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 154209.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 4209.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 3299.60 կգ, տեղերի քանակը 379:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Տավուշի տարածաշրջան) |
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 450 | Հատ | Շապիկ | | 11447.39 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 1112 | Հատ | Շապիկ | | 28287.71 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 3299.60 | 154209.00 | |

02528755 ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ WV ARMENIAN BRANCH

02528755 ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ WV ARMENIAN BRANCH

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1190 -Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 27-ի N 07/80-2/32335-15 և հոկտեմբերի 27-ի N 06/3-3/32357-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2015 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրում համայնքի գրադարանում գտնվող «Սմարթ» վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 7,414,989 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀՈՒՆ-ՍԱՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536528) 2015 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի Աքորի համայնքի մշակույթի տանը գտնվող «Սմարթ» սենյակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 7,903,030 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀՈՒՆ-ՍԱՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536528) 2015 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի Քարինջ համայնքի դպրոցում գտնվող ստեղծագործական սենյակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 5,110,140 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1191 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 07/80-2/32809-15 և հոկտեմբերի 29-ի N 06/3-3/32668-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հանքոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04716703) 2015 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված N 08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում՝ 1,286,004 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1192 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2015 թվականի հոկտեմբերի 28-ի N 07/80-2/32512-15 և հոկտեմբերի 26-ի N 06/3-3/32254-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և հոկտեմբերի 23-ի N Մ-1135-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հատուկ սանտեխմոնտաժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03503214) 2015 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 46 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է օդորակման և ջեռուցման աշխատանքների իրականացում՝ 15,268,292 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1193 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 2-ի N 07/80-233260-15 և նոյեմբերի 3-ի N 6/3-3/33375-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված երկու խմբաքանակ սառեցման համակարգի ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և հոկտեմբերի 23-ի N Մ-1135-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) «Новые спортивные технологии» ՍՊԸ-ից՝ 294,580 եվրո արժողությամբ.

2) «Новые спортивные технологии» ՍՊԸ-ից՝ 825,000 ռուսական ռուբլի արժողությամբ:

Ապրանքների ընդհանուր քաշը կազմում է 10,767 կգ:

Ընդհանուր փոխադրման և այլ ծախսերը կազմել են 2,324,100 դրամ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1194 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 27-ի N 07/80-2/32434-15 և հոկտեմբերի 28-ի N 06/3-3/32615-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-1065-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2015 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1195 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N Մ-860-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 9-ի N 07/80-2/34207-15 և նոյեմբերի 2-ի N 06/3-3/33039-15 եզրակացությունները ու հաշվի առնելով «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հիմնադրամի տնօրենի 2015 թվականի հոկտեմբերի 26-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 16-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ««Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Տրետուքի համայնքում բաղնիքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-860-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև 20.10.2015 թվական» բառերը փոխարինել «մինչև 10.12.2015 թվական» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1196 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԹԵՂՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/35210-15 և նոյեմբերի 6-ի N 06/3-3/33980-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 02/14/13907-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 1/32.2/16651-15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 01/21.1/5435-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 8,545,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Թեղուտ համայնքի ջրացանցի վերակառուցման համար խողովակների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեստ Պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239826) 2015 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված ԱՎ-ՀՋ-01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 8,545,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«11» նոյեմբերի 2015թ.

## «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Թեղուտ համայնքի ջրացանցի վերակառուցման համար խողովակների ձեռքբերում»

### ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վերակառուցել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Թեղուտ համայնքի ջրամատակարարման ցանցը և ապահովել այն խմելու ջրով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Թեղուտ համայնք, ջրամատակարարման բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 8.545.500,00 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Թեղուտ համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հոկտեմբերի 29 -ից մինչեւ 2015թ. դեկտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ հոկտեմբերի 29 -ից մինչեւ 2015թ. դեկտեմբերի 30-ը 8.545.500 դրամով գնել ջրացանցի վերակառուցման համար անհրաժեշտ խողովակներ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՎԵՍՏ ՊԼԱՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ից ՊԷ 100 մակնիշի պոլիէթիլենից 20-315 մմ տրամաչափի սառը ջրամատակարարման համար նախատեսված խողովակների ձեռքբերում՝ 8.545.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

Ի լրումն մեր 2015 թվականի նոյեմբերի 17-ի
N 15/15.1/19565-15 ելիցի

26 նոյեմբերի 2015թ.

No 15/15.1/20110-15

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ 1196 Ա որոշման 2-ին կետում «Վեստ Պլաստ» ՍՊԸ-ի հետ» բառերը փոխարինել «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի հետ» բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1197 - Ա**

**քաղ. Երևան**

**«ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (4-ՐԴ ՓՈՒԼ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/34566-15 և նոյեմբերի 10-ի N 6/3-3/34547-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 02/14/13877-15, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 06/18.1/6543-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 9-ի N 1/06/1428-15 եզրակացու-թյունները,* ***ո ր ո շ ու մ է .***

1. Բարեգործական որակել «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի (ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 10/2, ՀՎՀՀ՝ 02706151) կողմից իրականացվող՝ 219,429,717 դրամ ընդհանուր արժողությամբ «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագիրը (4-րդ փուլ) (ծրագիրը կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529671) 2015 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը պահնորդական ծառայությունների մատուցում 2,310,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Դելտապրո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00113358) 2015 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված N 12/10/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հավելվածում նշված աշխատանքների իրականացում՝ 16,265,129 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մոսկովյան ինվեստիցիոն շինարարական ընկերություն - ք. Երևան» ԱՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02573694) 2015 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 19/10/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ինժեներատեխնիկական վերահսկողության իրականացում՝ 944,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հատուկ սանտեխմոնտաժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03503214) 2015 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 45 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սանտեխնիկական աշխատանքների իրականացում՝ 10,945,012 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Հատուկ սանտեխմոնտաժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03503214) 2015 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 47 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է օդափոխության և թաքսայատան աշխատանքների իրականացում՝ 28,404,093 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Էներգոսիստեմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01252685) 2015 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 48 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտաքին ցանցերի էլեկտրամոնտաժային աշխատանքների իրականացում՝ 6,895,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ԷՄ ԴԻ ԷՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02632439) 2015 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 51 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աքսեսուարների տեղադրման աշխատանքների իրականացում՝ 4,850,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Մետալ-դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01239878) 2015 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 52 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է չժանգոտվող մետաղից 12 տոննա տարողությամբ հակահրդեհային ջրի բաքերի պատրաստում և տեղադրում՝ 9,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00251512) 2015 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 53 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մաքրման

աշխատանքների իրականացում՝ 6,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Գիզա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851914) 2015 թվականի նոյեմբերի 2-ին կնքված N 54 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամեկուսացման աշխատանքների իրականացում՝ 1,097,771 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության նախարարություն ու Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
"Բարեկեցություն" բարեգործական հիմնադրամի
տնօրեն
2015 թ.

Մարզաառողջարարական համալիրի կառուցում
Ծրագիր ( 4 -րդ փուլ)

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | ՀՀ ք.Երևանում «500 հանդիսատեսի համար սահադաշտով մարզաառողջարարական համալիր»-ի նախագծային, հեղինակային և տեխնիկական հսկողության, ինժեներական համակարգի և համաշինարարական աշխատանքների, ապրանքների ներմուծման և ձեռք բերման իրականացում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում նախատեսում են օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենքով սահմանված արտոնություններից |
| 3 | Բարեգործը | "Բարեկեցություն" բարեգործական հիմնադրամ (ք.Երևան, Հյուսիսային պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ՀՎՀՀ 02706151) |
| 4 | Ծրագրի կատարողը | "Բարեկեցություն" բարեգործական հիմնադրամ (ք.Երևան, Հյուսիսային պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ՀՎՀՀ 02706151) |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 27/10 քաղաքաշինություն |
| 6 | Ծրագրի բյուջեն | 219 429 717 /երկու հարյուր տասնինը միլիոն չորս հարյուր քսանինը հազար յոթ հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Երևանի համայնք |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.10.2015թ. - 30.12.2015թ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/ | ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ |
| | | 1. Նախագծային, հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ (տող 1 + տող 2) մինչև 30.12.2015թ | 944 000 | |
| | | 2. Համաշինարարական և ինժեներական համակարգի աշխատանքներ (տող 3+ տող 4) մինչև 30.12.2015թ | 118 485 717 | |
| | | 3. Շինարարական ապրանքների և սարքավորումների ներմուծում (տող 5) մինչև 30.12.2015թ | 100 000 000 | |
| | | 4. Շինարարական և այլ ապրանքների ձեռք բերում (տող 6) մինչև 30.12.2015թ | 0 | |
| | | 5. Կազմակերպչական ծախսեր մինչև 30.12.2015թ | 0 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 219 429 717 | |
| 10 | Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/ | ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ |
| | | 1. Նախագծային աշխատանք /հատուկ նշանակության/ | 0 | |
| | | 2. Տեխնիկական հսկողության աշխատանքներ 01.11.15 - 30.12.15 | 944 000 | «ՍԻՇԸ» ՍՊԸ |
| | | **3. Համաշինարարական աշխատանքներ, այդ թվում՝** | **49 257 912** | |
| | | 3.1 սանտեխմոնտաժային աշխատանքներ (ջրամատակարարում և կոյուղի) | 10 945 012 | «Հատուկսանտեխմոնտաժ» ՓԲԸ |
| | | 3.2 դռների և լուսամուտների պատրաստում և տեղադրում | 16 265 129 | «Դելտապրո» ՍՊԸ |
| | | 3.3 աքսեսուարների տեղադրում | 4 850 000 | «ԷՍ ԴԻ ԷՄ» ՍՊԸ |
| | | 3.4 չժանգոտվող մետաղից ջրի բաքերի պատրաստման և տեղադրման աշխատանքներ | 9 600 000 | «Մետալ-դիզայն» ՍՊԸ |
| | | 3.5 դահլիճի փոշեզրկում, ճակատի մաքրում, ադմինիստրատիվ մասնաշենքի մաքրում | 6 500 000 | «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ |
| | | 3.6 պոլիմերային բիտումային թաղանթով ջրամեկուսացման աշխատանքները | 1 097 771 | «Գիզա» ՍՊԸ |
| | | **4. Ինժեներական համակարգի աշխատանքներ, այդ թվում՝** | **69 227 805** | |
| | | 4.1 էներգոհամակարգի աշխատանքներ | 38 507 712 | «Էներգոսիստեմ» ՍՊԸ |
| | | 4.2 հովացման և սառեցման աշխատանքներ | 28 404 093 | «Հատուկսանտեխմոնտաժ» ՓԲԸ |
| | | 4.3 պահանորդային ծառայություն | 2 316 000 | «Արմորիլ» ՓԲԸ |
| | | **5. Ներմուծում, այդ թվում՝** | 100 000 000 | |
| | | 5.1 Սպորտ դահլիճի սարքավորումներ, տրենաժորներ, սառեցման և հովացման համակարգի, սառցապատրաստման սարքավորումներ,ծայնամեկուսիչ և ծայնահաղթեցման ապրանքներ | 100 000 000 | |
| | | **6. Ձեռք բերում, այդ թվում՝** | 0 | |
| | | 6.1 շին. ապրանքներ, սանտեխնիկական պարագաներ, վերհան ամբարձիչ, դահլիճի և կաբինետների կահույք | 0 | |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. աշխատավարձ | 0 | |
| | | 2. այլ ծախսեր | 0 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 0 | |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան | | |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կատարման արդյունքները հանձնման-ընդունման միջոցով, սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին | | |

Գլխ. հաշվապահ Դ.Վարդանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1198 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՍՈՒՐԲ ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 07/80-2/34735-15 և նոյեմբերի 12-ի N 06/3-3/34818-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 02/14/14014-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/9955-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N ԱՄ/22.2/12972-15 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 01/5761-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամի կողմից 2016-2018 թվականներին իրականացվող՝ 1,414,150,000 դրամ արժեքով ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, Շիրակի մարզ, Աշոցք, ՀՎՀՀ՝ 05806438) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2009 թվականի օգոստոսի 20-ին կնքված N 290012 պայմանագրում (2015 թվականի օգոստոսի 1-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 55,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Շիրակի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված N 02508134308 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը գազի մատակարարում՝ 32,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Կենտրոն-Արևմտյան» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 704643082 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 7,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի հունվարի 1-ին կնքված N 112848821S9300093, 112740687S9300093, 2011 թվականի դեկտեմբերի 1-ի N 116340433 պայմանագրերում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2007 թվականի հունիսի 28-ին կնքված N 056603 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը շարժական կապի ծառայությունների մատուցում՝ 7,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Էյ Ի Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2016 թվականի հունվարին կնքված N 3-80 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի հունվարի 31-ը գազազատման համակարգի տեխնիկական սպասարկում՝ 137,241 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02703411) 2015 թվականի նոյեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի մարտի 25-ը հաշվապահական հաշվառման և աուդիտի ծառայությունների մատուցում՝ 1,950,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «ՀՀ ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00107399) 2015 թվականի նոյեմբերի 3-ին կնքված N ՖՆ/ՈւԿ-15/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը անհրաժեշտ բլանկների տպագրում՝ 3,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԿԱՄԻԼԼԻԱՆՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ «ՍՈՒՐԲ ԿԱՄԻԼԼՈ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՏՆՕՐԵՆ՝ Հայր ՄԱՐԻՈ ԿՈՒԱՐՏԵԼԼԱ կողմից

«06» նոյեմբերի 2015թ.

## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է 2016-2018թթ. եռամսյակի ընթացքում կառավարել Աշոցքի «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցը՝<br>- մատուցելով անվճար առողջապահական ծառայություններ հիվանդանոցի մանկական և մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքներում<br>- մատուցելով անվճար առողջապահական ծառայություններ հիվանդանոցի շտապ օգնությունում<br>- մատուցելով անվճար առողջապահական ծառայություններ հիվանդանոցին կից 21 ամբուլատորիաներում<br>- մատուցելով անվճար առողջապահական ծառայություններ Շիրակի մարզի Աշոցքի և Աշոցքի տարածաշրջանի բնակավայրերի նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց:<br>- մատուցելով անվճար առողջապահական ծառայություններ մոտավոր 600/700 ընտանիքների, նրանց տրամադրելով նաև մարդասիրական այլ օգնություն:<br>- մատուցելով անվճար առողջապահական ծառայություններ նշված հիվանդանոցի մոտավորապես 140/150 աշխատակիցներին և նրանց ընտանիքի անդամներին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի Բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ Կառավարության 2003թ. Հունվարի N66 որոշման 3-րդ կետի բ) ենթակետի (օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից) |

| | | |
|---|---|---|
| 3. | Բարեգործը | Ծրագրի գլխավոր ֆինանսավորողը Կամիլիանների Կրոնական Միաբանությունն է:<br>Գտնվելու վայրը՝<br>Հռոմ,<br>Պիացցա դելլա Մադդալենա, 53<br>Հեռ.՝ 0039 06 / 899281 Ֆաքս՝ 0039 06 / 89928133<br>e-mail: segreteria.generale@camilliani.org |
| 4. | Ծրագիրը կատարողը | Սույն ծրագիրը իրականացվում է ԿԱՄԻԼԼԻԱՆՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ «ՍՈՒՐԲ ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի կողմից<br>Աշոցք, 2801, Շիրակի մարզ<br>Հեռ.՝ 00 374 10 / 280290<br>00 374 245 / 21722<br>Ֆաքս՝ 00 374 10 / 280290<br>e-mail: redemptorismaterashotsk@yahoo.it<br>camillians_ashotsk@web.am<br>Հարկային հաշվառման համարը՝ 05806438 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է ՀՀ Շիրակի Աշոցքի շրջանի տարածաշրջանում՝ չբացառելով Շիրակի մարզի և ընդհանրապես, Հայաստանի այլ շրջանները, ինչպես նաև Վրաստանի սահմանամերձ շրջանները՝ մասնավորապես Ջավախքի շրջանը:<br>Բարեգործական ծրագրի բնագավառներն են առողջապահական և սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրված նպատակներին հասնելու համար՝ 2016-2018թթ. եռամյակի ընթացքում ֆինանսավորումը հասնում է մոտ 1.413.150.000,00 (մեկ միլիարդ չորս հարյուր տասներեք միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) դրամի, որի մեծ մասը կատարվում է անմիջապես ֆինանսավորողի կողմից Իտալիայում (օրինակ՝ սննդամթերք, դեղորայք, բուժպարագաներ, գրենական պիտույքներ, մաքրության պարագաներ, ապահովագրություններ, բեռնարկղերի ուղարկման ծախսեր և այլն...): |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ Ջավախքի շրջանի բոլոր այն հիվանդները, ովքեր կցանկական Բարեգործության մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված կարգով օգտվել «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի ամբողջական բժշկական ծառայություններից,<br>Հայաստանի Աշոցքի տարածաշրջանի բնակչությունը, որոնք բացի հիվանդանոցի ծառայություններից՝ կարող են օգտվել նաև Աշոցքի շրջակա համայնքներում տեղակայված հիվանդանոցի մշտապես գործող 21 ամբուլատորիաներից,<br>- Հիմնականում Աշոցքի տարածշրջանի, ապա նաև Աշոցքի տարածաշրջանից դուրս բնակվող և կարիքավոր համարվող անձիք և ընտանիքները: Վերոհիշյալ խմբի մեջ մտնում են մոտավորապես 600/700 ընտանիք որոնք մարդասիրական օգնություն են ստանում: Օգնության տրամադրման չափանիշը հիվանդության կամ, ավելի ընդհանրացված, կարիքի առկայությունն է: Անապահով ընտանիքների ցանկերը կազմելիս հիմնադրամը համագործակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ներկայացված ծրագիրը ընդգրկում է 01.01.2016-ից մինչև 31.12.2018թթ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցն ունի ընդհանուր առմամբ 100 մահճակալ՝ տեղաբաշխված չորս ստացիոնար բաժանմունքների (թերապիայի, վիրաբուժության, գինեկոլոգիայի/մանկաբարձության և մանկաբուժության) ինչպես նաև շրջանի գյուղերում տեղակայված 21 բուժական-մանկաբարձական կետեր:<br>Վերը նշված հիմնադրամի Աշոցքի «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցն ունի մոտավորապես 140-ից/150 աշխատակիցներ, և անձնակազմի աշխատավարձը 2016-ից 2018թթ-ի համար նախատեսված է 650.000.000,00 (վեց հարյուր հիսուն միլիոն հի դրամ)<br>Ունենալով այդպիսի կառուցվածք՝ «Կամիլիանների Միաբանության Սուրբ Կամիլլո Բարեգործական Հիմնադրամ»-ը իր առջև դնում է հետևյալ նպատակները. |

Ծրագրով առանձին փուլեր նախատեսված չեն: Ծրագրով նախատեսված ժամանակաշրջանում շարունակական հիմունքներով մատուցվելու է անվճար բուժսպասարկում, ինչպես նաև շահառու ճանաչված 600/700 բնտանիքներին բաշխվելու մարդասիրական օգնություն: Վերոհիշյալ նպատակներով նաև ներմուծվելու մարդասիրական բեռ (տարեկան 350.000/երեք հարյուր հիսուն հազար/եվրո արժողությամբ), որի մի մասը (դեղորայք, բուժպարագաներ, մաքրության պարագաներ, սարքավորումներ, սննդամթերք և այլն) կօգտագործվի հիվանդանոցում

- Սպիտակեղենի, կտորեղենի համազգեստների պատրաստում, տրամադրում բուժ.աշխատակիցներին և մահճակալային պարագաների պատրաստում լվացում հիվանդանոցի լվացքատանը,
- Անվճար սնունդ՝ նախաճաշ, ճաշ, ընթրիք ստացիոնար հիվանդներին և հերթափոխող բուժ.աշխատակիցներին
- Դեղորայքի և բուժպարագաների անվճար տրամադրում հիվանդանոցին կից 21 ամբուլատորիաներում
- իսկ բեռի մյուս մասը (հագուստեղեն, սննդամթերք և այլն) կբաշխվի կազմակերպությունում գրանցված 600/700 շահառու ընտանիքներին:

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցն ունի ընդհանուր առմամբ 100 մահճակալ՝ տեղաբաշխված չորս ստացիոնար բաժանմունքների (թերապիայի, վիրաբուժության, գինեկոլոգիայի/մանկաբարձության և մանկաբուժության) ինչպես նաև շրջանի գյուղերում տեղակայված 21 բուժական-մանկաբարձական կետեր:<br>Ունենալով այդպիսի կառուցվածք՝ «Կամիլյանների Միաբանության Սուրբ Կամիլլո Բարեգործական Հիմնադրամ»-ը իր առջև դնում է հետևյալ նպատակները.<br>➢ Բարեգործական մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված կարգով տրամադրել բուժօգնություն, բուժսպասարկում և ստացիոնար բուժում (վիրահատությունները ներառյալ) ցանկացած քաղաքացու համար՝ առանց որևէ խտրականության,<br>➢ դեղորայքի, բուժպարագաների, բժշկական սարքավորումների, անեստետիկ միջոցների և այլնի ձեռքբերում և ներմուծում, |



- ➢ սննդամթերքի ձեռքբերում և ներմուծում,
- ➢ մեքենաների և ջեռուցման համար վառելանյութի ձեռքբերում,
- ➢ էլեկտրաէներգիայի, ջրի/կոյուղու, հեռախոսների վարձավճարների վճարում
- ➢ շտապ օգնության և մարդատար մեքենաների ձեռքբերում և ներմուծում

Ներկայացված 2016-2018թթ. իրականացվող ծրագիրը նախատեսված է շարունակական հիմունքներով և շարունակությունն է նախորդ տարիների ծրագրերի:

Տվյալ նպատակներին հասնելու համար՝ խնդրատու Հիմնադրամին 2016-2018թթ. եռամյակում անհրաժեշտ է Հայաստանում կատարել հետևյալ ծախսերը: Թվերը, բնականաբար, մոտավոր բնույթ ունեն, քանի որ ենթակա են շուկայական տատանումներին և սակագների հետագա փոփոխություններին:

| | Ծառայության անվանումը | Նախատեսված գումարը՝ (դրամով) երեք տարվա համար |
|---|---|---|
| 1 | Էլեկտրաէներգիա | 55.000.000,00 |
| 2 | Ջուր և կոյուղի | 7.200.000,00 |
| 3 | Հեռախոսակապի և շարժական կապի ծառայություններ (Belline-Աշոցք, Երևան, բջջային, արքավորումների և աքսուարների ձեռքբերում) | 5.000.000,00 |
| 4 | Հիվանդանոցի անձնակազմի աշխատավարձը | 650.000.000,00 |
| 5 | Բենզին և դիզվառելանյութ շտապ օգնության մեքենաների համար | 10.000.000,00 |
| 6 | Գազ կամ դիզվառելանյութ ջեռուցման համար | 32.600.000,00 |
| 7 | Դեղորայքի և բուժպարագաների ձեռքբերում | 55.000.000,00 |
| 8 | Սննդամթերքի ձեռքբերում | 75.000.000,00 |
| 09 | Հիվանդանոցին անհրաժեշտ բլանկների տպագրում | 3.600.000,00 |
| 10 | ՎիվաՍել շարժական կապի ծառայություն, սարքավորումների և աքսուարների ձեռքբերում | 7.500.000,00 |
| 11 | Աուդիտորական ծառայություն | 1.950.000,00 |
| 12 | Բենզին և դիզվառելանյութ ադմինիստրատիվ մեքենաների համար | 4.500.000,00 |

| | | |
|---|---|---|
| 13 | Ավտոմեքենաների ընդհանուր սպասարկում /ադմինիստրացիա և շտապ օգնության/ | 4.000.000,00 |
| 14 | Փաստաբանական /իրավագետի/ խորհրդատվություն | 1.800.000,00 |
| 15 | Բեռների ներմուծում (հագուստեղենի նոր և օգտագործված, դեղորայքի, բուժ. պարագաների, սննդամթերքի, համակարգիչների, գրենական պիտույքների, մաքրության պարագաների, բուժսարքավորումների, մեկ շտապ օգնության և մեկ մարդատար մեքենաների) | 500.000.000,00 |
| | ***Ընդամենը*** | ***1.413.150.000,00*** |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | • Հեռախոսակապի և շարժական կապի ծառայություններ 5.000.000,00<br>• Շարժական հեռախոսակապի ծառայություն 7.500.000,00<br>• Աուդիտորական ծառայություն 1.950.000,00<br>• Բենզին և դիզվառելանյութ վարչական ավտոմեքենաների համար 4.500.000,00<br>• Բենզին և դիզվառելանյութ շտապ օգնության ավտոմեքենաների համար 10.000.000,00<br>• Ավտոմեքենաների ընդհանուր սպասարկում /վարչական և շտապ օգնության ավտոմեքենաների համար/ 4.000.000,00<br>• Փաստաբանական /իրավագետի/ խորհրդատվություն 1.800.000,00<br>• Վարչական մասի աշխատակիցներ 25.200.000,00<br><br>Ընդամենը 59.950.000,00 /հիսունինը միլիոն ինը հարյուր հիսուն հազար/ մոտավոր բյուջեի 4,3 % : |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Կամիլլիանների Միաբանության Սուրբ Կամիլլո Բարեգործական Հիմնադարմ»-ը համագործակցում է ՀՀ Առողջապահության Նախարարության, պետական կառավարման այլ մարմինների, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |



| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սույն ծրագրի գործունակության և արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Կամիլլիանների Միաբանության Սուրբ Կամիլլո Բարեգործական Հիմնադրամ»-ի Հոգաբարձուների Խորհրդի կողմից: Սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվելու ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով:<br>Հիմնադրամը անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1199 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 07/80-2/34742-15 և նոյեմբերի 11-ի N 06/3-3/34666-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/9956-15 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 01/21.1/5412-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Թեհրանի Հայոց թեմական խորհրդի կողմից Հայ օգնության միության հասցեով ստացված բեռի (127 տեղ, 1,777.50 կգ ընդհանուր քաշով, 350 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը , բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսված է բաշխվելու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի անապահով ընտանիքներին:
2. Հայ օգնության միությանը՝ բեռի բաշխումից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1200 -Ա**
**քաղ. Երևան**

**«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34884-15 և նոյեմբերի 12-ի N 06/18-4/34773-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N ՖԲ/ԱնՄ-4/9967-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից «ՍՈԱՌ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռը (34 տեղ, 4,960 կգ քաշով, 110,690 ԱՄՆ-ի դոլար արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6,180 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի ձևակերպումն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի բաշխման ցանկը

| Արկղերի քանակը | Պարունակությունը | Արժեքը ԱՄՆ-ի դոլար | Ստացողը |
|---|---|---|---|
| 4 պալետ | Նոր խաղալիքներ | 35,840 | «Տիրամայր Հայաստանի կուսաստան» |
| 5 պալետ | Նոր խաղալիքներ | 44,800 | «Խարբերդի մասնագի-տացված մանկատուն» |
| 8 պալետ | Օճառ | 27,000 | «Խարբերդի մասնագի-տացված մանկատուն» |
| 7 պալետ | Օճառ | 1,000 | «Խարբերդի մասնագի-տացված մանկատուն» |
| 1 արկղ | Նոր փափուկ խաղալիքներ (կենդանիներ) | 200 | «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ |
| 8 արկղ | Դպրոցական պարագաներ | 1,800 | «Թռչունյան տուն» կրթա-համալիր-մանկատուն |
| 1 արկղ | Բրդյա գլխարկներ | 50 | «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1201 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 07/80-2/34675-15 և նոյեմբերի 11-ի N 6/3-3/34590-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆինանսավորմամբ ձեռք բերված թռուցիկները (19 տեղ, 150 կգ ընդհանուր քաշով, 139,870 ռուսական ռուբլի արժողությամբ, ներառյալ բեռնափոխադրման ծախսերը) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1302-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1202 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-177-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 07/80-2/34657-15 և նոյեմբերի 11-ի N 06/3-3/34670-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 9-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/9903-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-177-Ա որոշմամբ (2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-883-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից ձեռքբերված 2015 թվականի արտադրության HYUNDAI COUNTY BUS DIESEL մակնիշի ավտոբուսը (թափքի համարը՝ KMJHG17FPFC064198, շարժիչի համարը՝ D4AFEJ572854, 36,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,900 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Եսայան

«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի կողմից

« 12 » նոյեմբերի 2015թ.

«Կոտայքի մարզ,Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ▪ իրականացնել մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն;<br>▪ մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների համար ձևավորել հոգատար և ապահով ընտանեկան միջավայր, որը կապահովի նրանց ներդաշնակ զարգացումը և հետագա ինտեգրացումը;<br>▪ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ստեղծում է նոր ընտանիք: Երեխաները դառնում են ՍՕՍ-ընտանիքի անդամ և ապրում են ՍՕՍ-ընտանեկան տներում, ընդ որում յուրաքանչյուր ընտանեկան տանը ապրում, խնամվում և դաստիարակվում են միջինը մինչև 7 երեխաներ: Յուրաքանչյուր ընտանեկան տուն ներառում է 4 ննջասենյակ, հյուրասենյակ, խոհանոց և ճաշասենյակ, 3 սանհանգույց՝ համապատասխան լվացարաններով և զուգարաններով, մեկ տնտեսական սենյակ և խորդանոց: Յուրաքանչյուր ՍՕՍ-ընտանիք ղեկավարվում է ՍՕՍ-մայր դաստիարակի կողմից, որն ապրում և աշխատում է այդ տանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8, բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Կոտայքի Մարզ, գ. Կոտայք, Հերման-Գմայների փողոց 1:<br>ՍՕՍ Մանկական Գյուղ «Կոտայք» մասնաճյուղը գտնվում է Կոտայքի մարզի Կոտայք գյուղի կողմից անհատույց օգտագործման համար հանձնված շուրջ 6 հեկտար ընդհանուր հողատարածքի վրա: Այն բաղկացած է 13 ընտանեկան տներից, վարչա-տնտեսական և ուսումնական շինություններից: Այս բոլոր շենքերն ու շինությունները, ինչպես նաև դրանցում օգտագործվող գույքը կազմակերպության սեփականությունն են և հիմնականում ձեռք են բերվել «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) կողմից հատկացված միջոցներով: |



| | | |
|---|---|---|
| | | Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2013- 2015 թվականների կտրվածքով ծրագրի տարեկան բյուջեն կկազմի մոտ 296 060 325 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝<br>I եռամսյակում 64 528 836 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 63 122 036 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 77 717 615 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 90 691 837 ՀՀ դրամ<br>2013-2015 թթ. ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 888 180 975 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներ են հանդիսանում ծնողական խնամքից զրկված մինչև 15 տարեկան ընդհանուր թվով 91 երեխաներ, որոնք ՍՕՍ Մանկական Գյուղ են ընդունվում տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան հանձնաժողովների որոշումների և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա:<br>Սաների ընդունելությունն իրականացվում է տեղական համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համապատասխան որոշմամբ, աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա և հիմնականում ընդգրկվում են կամ երկողմանի, կամ միակողմանի ծնողական խնամքից զրկված երեխաներ ինչպես նաև «սոցիալապես որբացած» և լքված երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2013-2015 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր թվով 91 երեխաների շարունակական խնամքի և դաստիարակության անընդմեջ իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 64 658 586 ՀՀ դրամ; Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>2. Շուրջտարյա կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների և ամառային հանգստի կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 31 650 163 ՀՀ դրամ: Կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով,իսկ ամառային հանգստը կազմակերպվում է հուլիս,օգոստոս ամիսներին;<br>3. Շուրջտարյա առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում և հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 5 276 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>4. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 12 625 600 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>5. գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 14 712 000 ՀՀ դրամ:Ծախսերը կատարվում է ըստ անհրաժեշտության; |

6. ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 107 982 863.5 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;
7. Սաների համար 25 տեղանոց ավտոբուսի ձեռքբերում՝ 18 894 800 ՀՀ դրամ;
8. Կազմակերպական ծախսերը կազմում են մոտ 40 260 312 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով:

**10. Ձեր բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**

Երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացնելու համար կազմակերպությունը տրամադրում է ամսեկան ընտանեկան բյուջե, որը ներառում է նրանց սննդի, հիգիենայի պարագաների, լվացող նյութերի, հագուստի, դպրոցական և գրպանի ծախսերի, ինչպես նաև մանր փոխանակումների գումարները: Մանր փոխանակումները, որպես առանձին ծախսերի հոդված, ներառում է տարբեր տեսակի կենցաղային պիտույքների և պարագաների փոխարինում (ափսեներ, բաժակներ, էլեկտրական լամպեր, արդուկ, արդուկի սեղան, սրբիչներ, ինչպես նաև կենցաղային այլևայլ պարագաներ)՝ դրանց մաշվածության, շարքից դուրս գալու և այլևս պիտանի չլինելու դեպքում:

Յուրաքանչյուր նոր երեխա ընդունելիս կազմակերպությունը միանվագ հատկացնում է գումար (տես. «նոր երեխայի մուտքի գումար») նրանց համար հագուստ և առաջին անհրաժեշտության այլ պարագաներ ձեռք բերելու համար:

1. Ընդհանուր թվով 91 երեխաների խնամքի և դաստիարակության իրականացում SOS-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 64 658 586 ՀՀ դրամ, այդ թվում՝
   - 1.1. սնունդ՝ 29 473 500 ՀՀ դրամ
   - 1.2. լվացող նյութեր և հիգիենայի պարագաներ՝ 3 006 450 ՀՀ դրամ
   - 1.3. հագուստ և կոշիկ՝ 12 087 360 ՀՀ դրամ
   - 1.4. դպրոցական ծախսեր՝ 5 252 940 ՀՀ դրամ
   - 1.5. գրպանի գումար՝ 2 335 410 ՀՀ դրամ
   - 1.6. այլ ընտանեկան ծախսեր՝ 10 540 170 ՀՀ դրամ
   - 1.7. առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթի ձեռքբերումների եկամտային հարկ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 962 756 ՀՀ դրամ,
2. կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների և ամառային հանգստի կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 31 650 163 ՀՀ դրամ, այդ թվում՝
   - 2.1. Քիչ թիվ չեն կազմում նաև սոցիալապես որբացած և լքված երեխաները, որոնք իրենց ծնողների անտարբերության, բռնության, անտեսման կամ էլ ընտանեկան բարդ ու խճճված հանգամանքների բերումով է, որ հայտնվում են կացմակըրպության խնամքի ներքո: Որպեսզի կարողանանք ապահովել նրանց մտավոր, հոգևոր և ֆիզիկական ներդաշնակ զարգացումը, սաների համար կազմակերպվ ում են նաև արտադասարանային պարապմունքներ և նախասիրությունների խմբակներ:

     Նախասիրությունների խմբակների , ինչպես նաև մինչ SOS-ՄԳ ծրագրի մեջ ներգրավվելը հանրակրթական դպրոցներ չհաճախած կամ թերհաճախած



երեխաների համար, ինչպես նաև հատուկ դասընթացների և առանձնահատուկ ընդունակություններ ունեցող երեխաների արտադասարանային պարապմունքների կազմակերպում (մասնագետների վարձավճար, անհրաժեշտ պարագաների և նյութերի ձեռքբերում )՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 11 952 163 ՀՀ դրամ;

   - 2.2. մարզա-մշակութային միջոցառումներ, մարզական խաղեր, օլիմպիադաներ, մրցաշարեր, համերգներ, թատերական և կրկեսային ներկայացումներ, էքսկուրսիաներ, մանկական դիսկոտեկներ, ազգային ավանդական և միջազգային տոնական միջոցառումներ, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 193 500 ՀՀ դրամ;
   - 2.3. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 16 504 500 ՀՀ դրամ;

     *Կազմակերպությունը չունի սեփական ճամբարային կամ առողջարանային համալիրներ և ամառային արձակուրդների շրջանում երեխաների հանգիստը առավել բովանդակալից անցկացնելու և իրենց հասակակիցների հետ ինտեգրվելու նպատակով կազմակերպությունը նրանց ճամբարային ծրագիրը կազմակերպում է գործող որևէ ճամբարային համալիրում և ըստ կնքված պայմանագրերի՝ կատարում է բոլոր համապատասխան վճարումները: Առողջական խնդիրներ ունեցող երեխաներին կազմակերպությունը տանում է համապատասխան առողջարանային համալիրներ և դարձյալ կատարում է բոլոր վճարումները:*
3. առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում և հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 5 276 000 ՀՀ դրամ, այդ թվում՝
   - 3.1. երեխաների առաջնային առողջության պահպանում, և բուժսպասարկման ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 876 000 ՀՀ դրամ;
   - 3.2. հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 2 400 000 ՀՀ դրամ
4. Կոմունալ ծառայություններ ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 12 625 600 ՀՀ դրամ, այդ թվում՝
   - 4.1. ջրամատակարարման վարձավճար՝ 300 000 ՀՀ դրամ;
   - 4.2. էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 6 200 000 ՀՀ դրամ;
   - 4.3. գազամատակարարման վարձավճար՝ 5 000 000 ՀՀ դրամ;
   - 4.4. աղբահանության վարձավճար՝ 589 200 ՀՀ դրամ;
   - 4.5. տեղական հարկեր՝ 536 400 ՀՀ դրամ;
5. գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 14 712 000 ՀՀ դրամ, այդ թվում՝
   - 5.1. Մանկական գյուղի տարածքի և շինությունների (ընտանեկան տներ, ոռոգման, էլեկտրասնուցման, գազամատակարարման և ջրամատակարարման համակարգեր) վերանորոգում, պահպանում՝ և արդիականացում, գործիքների և պարագաների ձեռք բերում՝ 8 020 000 ՀՀ դրամ;

| | | |
|---|---|---|
| | | 5.2.կահույքի ձեռք բերում և վերանորոգում՝ 2 150 000 ՀՀ դրամ;<br>5.3.էլեկտրական սարքավորումների՝ սառնարանների, գազօջախների, փոշեկուլների, լվացքի մեքենաների, համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում՝ 4 542 000 ՀՀ դրամ;<br>6. ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 107 982 863.5 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>6.1.ՍՕՍ-մայր դաստիարակներ՝ 61 650 583.5 ՀՀ դրամ;<br>6.2.ՍՕՍ-մայր դաստիարակների օգնականներ՝ 20 146 887 ՀՀ դրամ;<br>6.3.մանկավարժական և բժշկական անձնակազմ՝ 22 296 666 ՀՀ դրամ;<br>6.4. դպրոցական ավտոբուսի վարորդ՝ 3 888 727 ՀՀ դրամ;<br>7. Սաների դպրոցներ, զանազան միջոցառումների, առողջապահական կազմակերպություններ, հանգստի վայրեր տեղափոխելու համար 25 տեղանոց ավտոբուսի ձեռքբերում՝ 18 894 800 ՀՀ դրամ;<br>8. Կազմակերպական ծախսերը 2013-2015 թվականներից յուրաքանչյուրի համար կազմում են մոտ 40 260 312 ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը 2013-2015 թվականներից յուրաքանչյուրի համար կազմում են մոտ 40 260 312 ՀՀ դրամ, որոնք համապատասխանաբար կազմում են 2013-2015 թվականների տարեկան բյուջեի 13.60 տոկոսը :<br>Այդ թվում՝<br>1. հանրային կապեր և ներկայացուցչական ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 110 000 ՀՀ դրամ;<br>2. աշխատակազմի ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 29 216 262.04 ՀՀ դրամ, ընդ որում՝<br>2.1. աշխատավարձ (վարչական և սպասարկող անձնակազմ) և ՍՕՍ-մայր դաստիարակի կենսաթոշակ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 27 716 262.04 ՀՀ դրամ;<br>2.2. ՍՕՍ-մայր դաստիարակների և նրանց օգնականների մասնագիտական սուպերվիզիա՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 500 000 ՀՀ դրամ;<br>3. հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 380 000 ՀՀ դրամ;<br>4. այլ ընթացիկ և չնախատեսված ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 608 300 ՀՀ դրամ, ընդ որում՝<br>4.1.ապահովագրություն՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 126 000 ՀՀ դրամ,<br>4.2.բանկային, չնախատեսված վարչական և ընթացիկ ծախսեր ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 482 300 ՀՀ դրամ,<br>5. տրանսպորտային միջոցների (ՎԱԶ 212300-55Լ ՇԵՎՐՈԼԵ-ՆԻՎԱ, Tucson մարդատար մեքենաներ, Mistubishi մակնիշի միկրոավտոբուս, HYUNDAY մակնիշի ավտոբուս) նորոգում, սպասարկում, շահագործում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 233 750 ՀՀ դրամ, |



| | | |
|---|---|---|
| | | 6. աշխատակիցների գործուղման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 312 000 ՀՀ դրամ;<br>7. տրանսպորտային ծախսերի փոխհատուցում և տրանսպորտային միջոցների վարձակալություն՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 400 000 ՀՀ դրամ; |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժական գործունեության աուդիտների իրականացման միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրեն՝ Ա. Քոչարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1203 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-885-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՖՈՒԼԵՐ ՏՆԱՇԻՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34827-15 և նոյեմբերի 11-ի N 6/3-3/34587-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարարական կազմակերպության կողմից իրականացվող «Անհայտ կորածների ընտանիքների և այլ խոցելի խմբերի տների վերականգնում» N Մ-885-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետում «ԿՄԽԿ-ից մեքենայի գնում «Toyota LC Hardtop Diezel HZ76» բառերը փոխարինել «ԿՄԽԿ-ից մեքենայի գնում և ներմուծում՝ «Toyota LC Hardtop Diezel HZ76» բառերով.

2) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սահմանել, որ «Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ «Կարմիր խաչի» միջազգային կոմիտեի հայաստանյան պատվիրակությունից ձեռքբերված Toyota Land Cruiser Hardtop DieselHZJ76L մակնիշի ավտոմեքենան (2009 թվականի արտադրության, թափքի համարը՝ JTEEB71J907006558, 2,200 կգ ընդհանուր քաշով, 8,000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ԱՄ ՄՁՄ ՄS) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1204 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 07/80-2/34741-15 և նոյեմբերի 12-ի N 06/3-3/34816-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա և 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Մեկիր Թանգի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09207464) 2015 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված N ՋՄ-02/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սյունիքի մարզի Լոր համայնքում ջրամատակարարման շինմոնտաժման աշխատանքների իրականացում՝ 6,391,529 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ն.Ռ.Վ.Ա.Դ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09210417) 2015 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված N ՋՄ-03/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սյունիքի մարզի Արևիս համայնքում ջրամատակարարման շինմոնտաժման աշխատանքների իրականացում՝ 6,360,350 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1205 - Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-857-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/34518-15 և նոյեմբերի 6-ի N 06/3-3/33979-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 30-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2015» ծրագրի մասին» N Մ-063-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ի կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2015 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտի իրականացում՝ 8,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«03» դեկտեմբերի 2015թ.

## «Հեռուստամարաթոն – 2015»
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նախապատրաստել հիմնադրամի հերթական բարեգործական դրամահավաքի՝ «Հեռուստամարաթոն-2015»-ի պատշաճ անցկացումը |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ և ԼՂՀ, սոցիալ-տնտեսական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 100.000.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ և ԼՂՀ ազգաբնակչությունը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հուլիսի 29-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 29-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական | 2015թ հուլիսի 29-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 29-ը «ՇԱՐՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից. |

| | | |
|---|---|---|
| | միջոցների ծավալը | 1 հատ տեղեկատվական ֆիլմի (մինչև 7 րոպե տևողությամբ) հայերեն, ֆրանսերեն և անգլերեն,<br><br>1 հատ տեղեկատվական տեսահոլովակի (25 վրկ. կևողությամբ),<br><br>2 հատ տեղեկատվական տեսահոլովակների (60 վրկ. տևողությամբ),<br><br>5 ֆիլմերից բաղկացած տեսաշարի (յուրաքանչյուրը մինչև 3 րոպե)<br><br>պատրաստում և «Հեռուստամարաթոն-2015»-ի ընդհանուր կոնցեպցիայի (դիզայներական ձևավորման) մշակում՝ 22.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի արժեղությամբ,<br><br>«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ի կողմից տարեկան աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 8.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>ինչպես նաև հաշվետու բնույթի, գովազդային, տեղեկատվական և քարոզչական նյութերի նկարահանում, տպագրություն, տարածում (առաքում), տեղադրում, ցուցադրում և այլ գործարքներ բարեգործական հեռուստամարաթոնին նվիրված միջոցառումների անցկացման շրջանակներում 70.000.000,00 ՀՀ դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՇԱՐՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից.<br><br>1 հատ տեղեկատվական ֆիլմի (մինչև 7 րոպե տևողությամբ) հայերեն, ֆրանսերեն և անգլերեն,<br><br>1 հատ տեղեկատվական տեսահոլովակի (25 վրկ. կևողությամբ), |



| | | |
|---|---|---|
| | | 2 հատ տեղեկատվական տեսահոլովակների (60 վրկ. տևողությամբ),<br>5 ֆիլմերից բաղկացած տեսաշարի (յուրաքանչյուրը մինչև 3 րոպե) պատրաստում և «Հեռուստամարաթոն-2015»-ի ընդհանուր կոնցեպցիայի (դիզայներական ձևավորման) մշակում՝ 22.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի<br><br>«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ի կողմից տարեկան աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 8.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի,<br>**Նախատեսվում** է նաև հաշվետու բնույթի, գովազդային, տեղեկատվական և քարոզչական նյութերի նկարահանում, տպագրություն, տարածում (առաքում), տեղադրում, ցուցադրում և այլ գործարքներ բարեգործական հեռուստամարաթոնին նվիրված միջոցառումների անցկացման շրջանակներում 70.000.000,00 ՀՀ դրամ մոտավոր արժեքով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ի կողմից տարեկան աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 8.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն համապատասխան մարզպետարանների և ԼՂՀ Կառավարության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1206 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-870-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/34465-15 և նոյեմբերի 6-ի N 06/3-3/33978-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 22-ի N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» («Հայաստան» համահայկական հիմնադրամ)» N Մ-330-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «2,673,003 դրամի չափով» բառերը փոխարինել «2,680,800 դրամի չափով».

2) որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետում «20,000,000 դրամի չափով» բառերը փոխարինել «117,000,000 դրամի չափով».

3) որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետում «4,184,238 դրամի չափով» բառերը փոխարինել «4,223,838 ռուսական ռուբլու չափով».

4) որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետում «4,092,056.75 դրամի չափով» բառերը փոխարինել «5,372,497 ռուսական ռուբլու չափով»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1207 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-193-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/34528-15 և նոյեմբերի 6-ի N 06/3-3/33981-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական մասնագիտական դպրոցի կառուցման հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագրի մասին» N Մ-193-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում «մինչև 2013թ. օգոստոսի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2015թ. դեկտեմբերի 30-ը».

2) որոշման 1-ին կետում, 2-րդ կետի 2-րդ պարբերությունում, որոշմամբ հաստատված ծրագրի 5-րդ և 9-րդ կետերում «6,510,000 ՀՀ դրամ» բառերը փոխարինել «9,950,000 ՀՀ դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1208 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի նոյեմբերի 2-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից ձեռքբերված արևային ջրատաքացուցիչները (6 տեղ, 1,820 կգ քաշով, 14,187.08 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 903,000 դրամ, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1209-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՒՋԱՆ ԳՅՈՒՂԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի նոյեմբերի 11-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել հոլանդական «Global Aid Network» բարեգործական (ոչ առևտրային) կազմակերպության միջոցներով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցի հասցեով ուղարկված բեռի (9,220 կգ ընդհանուր քաշով, 2,830 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 3,520 եվրո, «Արարատյան» ՏՄ, բեռի բաշխման ցանկը կցվում է) ներմուծման ծրագիրը: Բեռը անհատույց բաշխվելու է Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի մարզպետարանին, առանձին դպրոցներին և հիվանդանոցներին:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*ՈՒՋԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ*

*Բեռի բաշխման ցանկ*

**GLOBAL AID NETWORK բարեգործական կազմակերպությունից 22.10.2015թ-ին Ուջանի միջնակարգ դպրոցի անվամբ ստացված գույքի**

**1) Թալինի մշակույթի տանը**

6 հատ սեղան (օգտագործված), 6 հատ աթոռ,2 հատ գրատախտակ(օգտագործված), 2 հատ պահարան( օգտագործված), 2 հատ էկրան (օգտագործված)

**2) Թալինի հիվանդանոցին**

10 հատ մահճակալ մատրասներով (օգտագործված),3 հատ հիվանդանոցային մահճակալ(օգտագործված), 1 հատ գինեկոլոգիական աթոռ(օգտագործված), 3 հատ պահարան

**3) Ապարանի հիվանդանոցին**

5 հատ մահճակալ մատրասներով (օգտագործված), 1 հատ հիվանդանոցային մահճակալ(օգտագործված) ,4 հատ պահարան (օգտագործված) ,1 հատ էկրան (օգտագործված)

**4) Աշտարակի հիվանդանոցին**

7 հատ մահճակալ մատրասներով (օգտագործված), 2 հատ հիվանդանոցային մահճակալ(օգտագործված) , 4 հատ պահարան (օգտագործված) , 2 հատ էկրան (օգտագործված) , 1 հատ գինեկոլոգիական աթոռ (օգտագործված)

**5) Ծաղկահովտի հիվանդանոցին**

5 հատ մահճակալ մատրասներով (օգտագործված), 2 հատ պահարան (օգտագործված) , 1 հատ էկրան (օգտագործված) ,

**6) Բյուրականի դպրոցին**

2 հատ էկրան (օգտագործված)

**7) Արագածոտնի մարզպետարանի սոցիալական բաժնին**

40 զույգ հենակներ (օգտագործված), 16 հատ անիվավոր քայլակներ (օգտագործված)
Մնացած 13 հատ աշակերտական սեղան և աթոռները (օգտագործված), 21 հատ նստարանները (օգտագործված), 4 էկրանները (օգտագործված), 18 հատ գրատախտակները (օգտագործված), 3 հատ բազկաթոռները (օգտագործված) և 30 արկղ հագուստը (օգտագործված) մնում են Ուջանի դպրոցին :

Ընդհանուրը 9220 կգ., 2830.0 Եվրո արժողությամբ /3520.0 եվրո ճանապարհածախսով / :

Ուջանի մ/դ տնօրեն /Ա.Հարությունյան /

**05.11.2015թ.**

**հեռ./tel +374 093-21-63-93**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1210 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի նոյեմբերի 12-ի համաձայնեցման թերթը, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ակացիաները (1600 տեղ, 21,020 կգ ընդհանուր քաշով, 16,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա, 2015 թվականի հունվարի 26-ի N Մ-006-Ա և հոկտեմբերի 7-ի N Մ-1109-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1211- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 16-ի N ԱՄ/15/11945-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 4-ի N 07/80-2/33617-15 և հոկտեմբերի 29-ի N 06/3-3/32792-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-776-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Երևանի քաղաքապետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Առողջապահության նախարարության
Աշխատակազմի ղեկավար
Ա. Կարապետյանի կողմից
«15» ...10... 2015թ.

## Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի ազգային ծրագրի ուժեղացման և դեղորայքակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման դրամաշնորհային ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կրճատել տուբերկուլյոզի (ՏԲ) բեռը Հայաստանի Հանրապետությունում՝ բարձրացնելով ՏԲ ախտորոշման, որակյալ բուժման ծառայությունների մատչելիությունը, և բնակչության անվճար հակատուբերկուլյոզային բուժօգնություն տրամադրելով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ 1214 Վերներ, ժնև, Շվեյցարիա |
| 4. | Ծրագրի կատարողը | ՀՀ առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խումբ<br>Կառավարության տուն 3, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>ՀՎՀՀ 02507171 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսվում է կազմակերպել միջոցառումներ ք. Երևանում և ՀՀ մարզերում:<br>Ծրագրի բնագավառը՝ առողջապահություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 7911011 (յոթ միլիոն ինը հարյուր տասնմեկ հազար տասնմեկ) եվրոյին համարժեք դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տուբերկուլյոզով հիվանդ ՀՀ քաղաքացիները և նրանց ընտանիքների անդամները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևանում տուբերկուլյոզի բուժմամբ և կառավարմամբ զբաղվող բժշկական հաստատությունները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը: |

14/Է, 5

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն ծրագիրը հանդիսանում է 2009 թ.-ի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա ծրագրի 2-րդ փուլի և 2010թ. փետրվարի 18-ի N Մ-90-Ա ծրագրի 1-ին փուլի շարունակական միահոսք ֆինանսավորման, ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ.-ի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2015թ. հուլիսի 24-ի թիվ Մ-776-Ա որոշման խմբագրությամբ) 3 ամսով երկարացված խմբագրությունը՝ ուղղված ՀՀ-ում տուբերկուլոզի ազգային ծրագրի ուժեղացմանը և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնմանը: Ծրագրի առաջին փուլի երկարաձգված ժամկետն է 2012 թ. հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագրի երկարաձգման նպատակն է ապահովել ծրագրի շարունակականությունը մինչ Գլոբալ հիմնադրամի ֆինանսավորման նոր մեխանիզմով ֆինանսավորվող 3 տարի ժամկետով նոր դրամաշնորհային ծրագրի մեկնարկը, որը տեղի կունենա ստորագրված Տրջանակային Համաձայնագիրը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացման գործընթացի ավարտից հետո:<br><br>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 31.01.2012 թվականի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին թիվ Մ-068-Ա որոշմամբ (ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 24.07.2015 թվականի թիվ Մ-776-Ա որոշման խմբագրությամբ) ներկայացված ծրագրի չորրորդ տարվա վերջին եռամսյակի բյուջեն ավելացվել է նախորդ ժամանակաշրջանների խնայողությունների հաշվին:<br><br>Ծրագրի շրջանակներում վերոնշյալ 1-ին փուլով նախատեսված ժամկետներում կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝<br><br>1. Տուբերկուլոզի կառավարման և ախտորոշման որակը բարձրացնելու նպատակով առողջապահական համակարգի բժիշկների և բուժքույրերի, լաբորատոր ցանցի մասնագետների, դեղակայուն տուբերկուլոզի կառավարմամբ և բուժմամբ զբաղվող անձնակազմի վերապատրաստման ներքոհիշյալ դասընթացների կազմակերպում՝ **272646** եվրոյին համարժեք դրամ: Նախատեսվում է դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ որպես մասնակից կողմ (գումարի շրջանակներում կազմակերպությունը բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հաստատմանը կներկայացնի առանձին ծրագիր): |



| Նկարագրություն | **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2015թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|---|
| Դեղակայուն տուբերկուլոզի կառավարման վերաբերյալ վերապատրաստում արտասահմանում (տարեկան 6 մասնակից) | 23280 | 23280 | 23280 | 0 |
| Դեղակայուն տուբերկուլոզի կառավարման տեղային դասընթացների կազմակերպում միջազգային փորձագետ/դասավանդողների կողմից տուբերկուլոզի ստացիոնար բուժում իրականացնող մասնագետների համար (տարեկան 20 մասնակից) | 8200 | 8200 | 8200 | 2156 |
| Դեղակայուն տուբերկուլոզով հիվանդների ամբուլատոր բուժումն իրականացնող մասնագետների վերապատրաստում (տարեկան 20 մասնակից) | 9400 | 9400 | 9400 | 0 |
| Տուբերկուլոզային դասընթացներ առողջության առաջնային պահպանման օղակի բժիշկների և բուժքույրերի համար (նախատեսվում է ծրագրի իրականացման 2-րդ տարում կրթել 1200 մասնակից, և 3-րդ տարում 900 մասնակից) | 0 | 49200 | 36900 | 0 |
| Տուբերկուլոզի ամբիոններում | 0 | 1250 | 0 | 0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| դասավանդողների կրթում (նախատեսվում է ծրագրի իրականացման 2-րդ տարում կրթել 25 մասնակից) | | | | |
| Տուբերկուլոզի ոլորտում վարակի վերահսկման ուժեղացման նպատակով բուժանձնակազմի վերապատրաստում (նախատեսվում է ծրագրի իրականացման 2-րդ տարում կրթել 1000 մասնակից) | 0 | 50000 | 0 | 0 |
| Տուբերկուլոզի ծրագրի մշտադիտարկման և գնահատման պարբերական հանդիպումների կազմակերպում (տարեկան 2 հանդիպում) | 2000 | 2000 | 2000 | 0 |
| Դասավանդման համար անհրաժեշտ նյութերի մշակում փորձագետների կողմից | 1800 | 2700 | 0 | 0 |

2. Տուբերկուլոզի էլեկտրոնային կառավարման ցանցի ստեղծում՝ ՀՀ տուբերկուլոզային կենտրոններում՝ **107719** եվրոյին համարժեք դրամ: Նախատեսվում է դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ որպես մասնակից կողմ (գումարի շրջանակներում կազմակերպությունը բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հաստատմանը կներկայացնի առանձին ծրագիր):

| **Նկարագրություն** | **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2015թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|---|
| Համակարգի սպասարկման | 7200 | 7200 | 5400 | 4806 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| մասնագետի ծառայությունների վճար | | | | |
| Ինտերնետ ծառայության վճար: Առաջին տարում նախատեսվում է պիլոտային գործարկում 13 ՏԲ կենտրոններում: 2-րդ տարվա մեջ կընդգրկվեն բոլոր ՏԲ կենտրոնները: Գումարը ներառում է նաև ինտերնետի տեղադրման միանվագ վճարը: | 6300 | 43074 | 23595 | 10144 |

3. Տուբերկուլոզի ազգային կենտրոնին կտրամադրվեն լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ միջմարզային հանձնաժողովների մշտադիտարկման այցերի, տուբերկուլոզի համակարգողների ինչպես նաև միջմարզային կոմիտեների պարբերական հանդիպումների կազմակերպման, ազգային ռեֆերենս լաբորատորիայի գործունեության աջակցման և վերահսկողական նպատակների համար՝ **571923** եվրոյին համարժեք դրամ: Նախատեսվում է դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ որպես մասնակից կողմ (գումարի շրջանակներում կազմակերպությունը բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հաստատմանը կներկայացնի առանձին ծրագիր):

| **Նկարագրություն** | **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2015թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|---|
| Տուբերկուլոզային հաստատություններից ազգային ռեֆերենս լաբորատորիա խորխի տեղափոխման համար անհրաժեշտ ծախսերի փոխհատուցում | 17280 | 17280 | 17280 | 17762 |
| Տուբերկուլոզի ազգային ծրագրի աշխատանքների կատարումն ապահովելու | 60000 | 60000 | 60000 | 52547 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| նպատակով լրացուցիչ ֆինանսական աջակցություն | | | | |
| Տուբերկուլոզով հիվանդների տնային խնամքի իրականացում | | | | 87619 |
| Տուբերկուլոզի ազգային կենտրոնի պահպանման ծախսեր | | | | 28154 |
| Հանրային իրազեկման աշխատանքներ | | | | 3649 |
| Տուբերկուլոզով հիվանդների բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բուժման ժամանակահատվածում հիվանդներին սոցիալական աջակցության փորձարարական ծրագրի իրականացում: | | | | 150352 |

4. Կիրավիրվեն միջազգային փորձագետներ դեղակայուն տուբերկուլոզի կառավարման բարելավմանն ուղղված տեխնիկական աջակցության տրամադրման նպատակով՝ **107265** եվրոյին համարժեք դրամ: Նախատեսվում է դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ որպես մասնակից կողմ (գումարի շրջանակներում կազմակերպությունը բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հաստատմանը կներկայացնի առանձին ծրագիր):

| **Նկարագրություն** | **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| Դեղակայուն տուբերկուլոզի հակազդման ծրագրի վերանայման տեխնիկական աջակցություն՝ համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տարածաշրջանային ծրագրի | 15956 | 15956 | 15956 |



| | | | |
|---|---|---|---|
| Տուբերկուլոզային դեղամիջոցների կառավարման բարելավման ընթացակարգի մշակում | 8340 | 8340 | 8340 |
| Արտագնա հիվանդների խնամքի ռազմավարությա մշակում | 3634 | 0 | 0 |
| Տուբերկուլոզ/ՁԻԱՀ վերահսկման համակարգի բարելավում | 6893 | 6893 | 5725 |
| Մշտադիտարկման և գնահատման ազգային ծրագրի մշակում | 11232 | 0 | 0 |

5. Տուբերկուլոզով հիվանդների սոցիալական ապահովության աստիճանը բարձրացնելու նպատակով կտրամադրվի սոցիալական աջակցություն՝ **2256134 եվրոյին համարժեք դրամ:** Նախատեսվում է դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացում «Հայկական կարմիր խաչի ընկերություն» ՀԿ-ին՝ որպես մասնակից կողմ (գումարի շրջանակներում կազմակերպությունը բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հաստատմանը կներկայացնի առանձին ծրագիր):

| **Նկարագրություն** | **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** եվրոյին համարժեք դրամ | **2015թ.** եվրոյին համարժեք դրամ |
|---|---|---|---|---|
| ռեգուլյար և դեղակայուն տուբերկուլոզով հիվանդներին բուժման ամբուլատոր և ստացիոնար փուլերում կբաշխվեն սննդային և հիգիենիկ փաթեթներ.<br>- 52 հիվանդի ստացիոնար բուժման փուլում շաբաթական 1 անգամ կտրամադրվի թարմ սննդի փաթեթ<br>- Ամբուլատոր փուլում գտնվող հիվանդներին կհատկացվի մինչև 2 | **300880** | **319880** | **343105** | **171390** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| սննդային և 1 հիգիենիկ փաթեթ (4248 դեղակայուն հիվանդ փաթեթ, 6000-8000 ռեգուլյար հիվանդ/փաթեթ տարեկան) | | | | |
| դեղորայքի կողմնակի /տոքսիկ/ ազդեցության նվազեցման նպատակով կտրամադրվի հեղուկ /հյութ/ (474 հիվանդի ամսական 26 օր կտրամադրվի 400մլ բնական հյութ) | **88733** | **88732** | **88733** | **15654** |
| ծմռան ամիսների համար կտրամադրվի ջեռուցման ծախսերի փոխհատուցում (հիվանդների 50%-ին, ըստ կարիքների գնահատման, ծմռան 3.5 ամիսների համար կտրամադրվի 15000 դրամի չափով օգնություն՝ ջեռուցման ծախսերի համար) | **24900** | **24900** | **24900** | **0** |
| բուժաշխատողի անմիջական վերահսկողության տակ դեղորայքի ընդունման համար կփոխհատուցվեն տրանսպորտային ծախսերը ՏԲ հիվանդներին, կամ բուժքույրերին, այն հիվանդների համար, որոնք ի վիճակի չեն այցելել բուժհաստատություն (տարեկան 175448 այց՝ մինչև 1 եվրո մեկ այցի համար) | **175448** | **175448** | **175448** | **55248** |
| կկազմակերպվեն կրթական միջոցառումներ՝ հիվանդների | **8171** | **8171** | **8171** | **1095** |



| | | | | |
|---|---|---|---|---|
| բուժման նկատմամբ հետևողականության բարձրացման նպատակով (հոգեբաններից, սոցիալական աշխատողներից, բուժքույրերից կազմված մասնագետների խմբի կողմից) | | | | |
| Կազմակերպական ծախսեր | **40000** | **40000** | **40000** | **37127** |

6. Նախատեսվում է վերանորոգել Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի օդափոխության համակարգը, որի համար հատկացված է **241000** եվրոյին համարժեք դրամ: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2013-2015 թվականներին:

7. Տուբերկուլոզով հիվանդ ՀՀ քաղաքացիների անվճար բուժումն ապահովելու նպատակով կներմուծվեն առաջին և երկրորդ շարքի դեղամիջոցներ՝ **1375585** եվրոյին համարժեք դրամ՝ ներառյալ տեղափոխման, մաքսազերծման և այլ լրացուցիչ ծախսերը (գումարի վճարումը կիրականացվի Գլոբալ հիմնադրամի կողմից ուղղակիորեն): Հարկ է նշել որ, վճարման և դեղերի մատակարարման միջև առկա է մինչև 9 ամիս ժամանակահատված:

| **Նկարագրություն** | **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2015թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1-ին շարքի հակատուբերկուլոզային դեղամիջոցներ | 60000 | 80000 | 80000 | 0 |
| 2-րդ շարքի հակատուբերկուլոզային դեղամիջոցներ* | 383371 | 383370 | 183371 | 205473 |

8. Հակատուբերկուլոզային դեղորայքի կողմնակի ազդեցության դեղերի ձեռքբերում՝ **16040** եվրոյին համարժեք դրամ արժողությամբ:

| **Նկարագրություն** | **2012թ.** /եվրոյին | **2013թ.** /եվրոյին | **2014թ.** /եվրոյին | **2015թ.** /եվրոյին |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համարժեք դրամ/ | համարժեք դրամ/ | համարժեք դրամ/ | համարժեք դրամ |
| Կողմնակի ազդեցության դեղամիջոցներ | 3290 | 2700 | 5050 | 5000 |

9. Դեղակայուն տուբերկուլոզի կառավարումն ուժեղացնելու նպատակով նախատեսվում է տարեկան 1 անգամ Կանաչ լույսի կոմիտեի փորձագետների այց Հայաստանի Հանրապետություն՝ տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ **146266** եվրոյին համարժեք դրամ (գումարի վճարումը կիրականացվի Գլոբալ հիմնադրամի կողմից ուղղակիորեն):

| **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2015թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| 36922 | 36922 | 36922 | 35500 |

10. Տուբերկուլոզի ախտորոշման թեստերի, լաբորատոր ծախսանյութերի, բժշկական և վարակի վերահսկման պարագաների ձեռքբերման, ինչպես նաև ախտորոշիչ սարքավորումների պահպանման և վերանորոգման ծախսեր՝ **1076291** եվրոյին համարժեք դրամ (սարքավորումների և բժշկական ծախսանյութերի որոշ մասի ձեռքբերումը և գումարի վճարումը իրականացվում է Գլոբալ հիմնադրամի կողմից ուղղակի գնման մեխանիզմով): Հարկ է նշել որ վճարման և մատակարարման միջև առկա է մինչև 9 ամիս ժամանակահատված:

| **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2015թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| 368113 | 300134 | 321039 | 87005 |

11. Տուբերկուլոզային կենտրոնների վերանորոգման աշխատանքների իրականացում՝ **296417** եվրոյին համարժեք դրամ (ներառյալ նախագծում և փորձագիտական հսկողություն): Աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2012-2015 թվականներին:



12. Տուբերկուլոզային կենտրոնների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ տուբերկուլոզի ծրագրի էլեկտրոնային կառավարման և վերահսկման նպատակով՝ **34500** եվրոյին համարժեք դրամ: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2012-2015 թվականին:

13. Անբարեհաջող ելքով տուբերկուլոզային հիվանդների համար պալիատիվ խնամքի կենտրոնի ստեղծում՝ **67500** եվրոյին համարժեք դրամ՝ ներառյալ շինարարության նախագծում, նախագծման փորձաքննություն, շինարարություն, տեխնիկական վերահսկում: Աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2013-2015 թվականներին:

14. Նախատեսվում է իրականացնել գործառնական հետազոտություններ՝ գնահատելու և բարելավելու ծրագրային ցուցանիշների առաջադիմությունը՝ **78000** եվրոյին համարժեք դրամ:

| **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|
| 18000 | 30000 | 30000 |

15. Նախատեսվում է ձեռք բերել տուբերկուլոզի ախտորոշման ժամանակակից սարքավորումներ՝ MGIT Bactec960, GeneXpert, ռենտգեն, իրական ժամանակում ՊՇՌ և այլ տուբերկուլոզի ախտորոշիչ սարքավորումներ՝ **579205** եվրոյին համարժեք դրամ: Սարքավորումների ձեռքբերումը նախատեսված է 2012-2015 թվականներին:

16. Ավտոմեքենայի ձեռքբերում՝ տուբերկուլոզի ազգային կենտրոնի կողմից ծրագրի կառավարումն ու վերասկումը ուժեղացնելու նպատակով՝ **15000** եվրոյին համարժեք դրամ: Ավտոմեքենայի ձեռքբերումը նախատեսված է ծրագրի իրականացման 3-րդ տարում՝ 2014 թվականին: Մեքենան հանձնվելու է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ագային կենտրոն» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով՝ մնալով ՀՀ առողջապահության նախարարության հաշվեկշռում: Ծրագրի իրականացման 2015թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում նախատեսվում է ձեռք բերել 2-րդ ավտոմեքենան՝ 40,858 եվրոյին համարժեք դրամ գումարով: Մեքենայի ձեռքբերումը նախատեսվում է իրականացնել «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում, և ծրագրի ավարտից հետո ավտոմեքենան մնալու է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում:

17. Տարեկան 2 անգամ նախատեսվում է իրականացնել խորխի տեղափոխում վերազգային ռեֆերենս լաբորատորիա որը գտնվում է Գերմանիայի Բորստել քաղաքում՝ լաբորատոր ախտորոշման որակի վերահսկողության նպատակով, որի համար նախատեսված է **9600** եվրոյին համարժեք դրամ:

| **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|
| 3200 | 3200 | 3200 |

18. Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է տարբեր փորձագետների խորհրդատվական/տեխնիկական աջակցության, աուդիտորական, թարգմանչական, հրատարակչական, լուսաբանման ծառայությունների ձեռք բերում՝ **92299** եվրոյին համարժեք դրամ:

| **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|
| 6214 | 39656 | 46429 |

19. Ծրագրի իրականացման հետ կապված այլ վարչական ծախսեր (աշխատավարձեր, գործուղումներ, պահպանման ծախսեր)՝ **526763** եվրոյին համարժեք դրամ:

Դրամաշնորհային ծրագիրը բաղկացած է 2 մակրոնպատակներից՝

1. Ուժեղացնել տուբերկուլոզի ազգային ծրագիրը (դասընթացների/վերապատրաստումների կազմակերպում, տեխնիկական/խորհրդատվական աջակցություն; շինարարություն, վերանորոգում; սարքավորումների, բժշկական և լաբորատոր պարագաների, դեղամիջոցների ձեռքբերում):

Սույն նպատակի բյուջեն ծրագրի իրականացման առաջին 3 տարիների ընթացքում ըստ եռամսյակների (եվրոյին համարժեք դրամ)՝

| **ժամանակահատված** | **եվրոյին համարժեք դրամ** |
|---|---|
| I եռամսյակ | 0 |
| II եռամսյակ | 212509 |
| III եռամսյակ | 487074 |
| IV եռամսյակ | 152354 |
| V եռամսյակ | 64454 |
| VI եռամսյակ | 313930 |
| VII եռամսյակ | 310141 |
| VIII եռամսյակ | 280756 |
| IX եռամսյակ | 800997 |
| X եռամսյակ | 408043 |
| XI եռամսյակ | 276235 |
| XII եռամսյակ | 179882 |
| XIII եռամսյակ | 178681 |
| XIV եռամսյակ | 178680 |
| XIV եռամսյակ | 129422 |
| XVI եռամսյակ | 621479 |



2. Բարձրացնել տուբերկուլոզով հիվանդների ախտորոշման և բուժման արդյունավետությունը (տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցություն, հասարակության իրազեկում):

Սույն նպատակի բյուջեն ծրագրի իրականացման առաջին 3 տարիների ընթացքում ըստ եռամսյակների՝

| **ժամանակահատված** | **եվրոյին համարժեք դրամ** |
|---|---|
| I եռամսյակ | 202231 |
| II եռամսյակ | 252010 |
| III եռամսյակ | 219213 |
| IV եռամսյակ | 213292 |
| V եռամսյակ | 215278 |
| VI եռամսյակ | 274181 |
| VII եռամսյակ | 227307 |
| VIII եռամսյակ | 227867 |
| IX եռամսյակ | 191200 |
| X եռամսյակ | 262757 |
| XI եռամսյակ | 239838 |
| XII եռամսյակ | 205074 |
| XIII եռամսյակ | 182466 |

| | |
|---|---|
| XIV եռամսյակ | 182467 |
| XIV եռամսյակ | 50353 |
| XVI եռամսյակ | 170840 |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման 3 տարիների ընթացքում ըստ ստորև նշված ծրագրային նպատակների նախատեսվում է ձեռքբերել կամ ներմուծել ապրանքներ և ծառայություններ՝ **7306693 եվրոյին համարժեք դրամ** ընդհանուր արժողությամբ: |

| **Նկարագրություն** | **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2015թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|---|
| **Տուբերկուլոզի կառավարման ազգային կարողությունների ուժեղացում**<br>- Բուժաշխատողների վերապատրաստում,<br>- ՏԲ ոլորտի ղեկավարների վերապատրաստում<br>- Տեղային և արտասահմանյան փորձագետների խորհրդատվական/տեխնիկական աջակցություն<br>- Բժշկական կահույքի և պարագաների ձեռքբերում հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի վերանորոգված բաժանմունքների համար<br>- Տուբերկուլոզային բուժհաստատությունների վերանորոգում/շինարարությ | 626500 | 356789 | 344659 | 421841 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| ուն<br>- Տուբերկուլոզի կառավարումը ուժեղացնելու նպատակով համակարգչային սարքավորումների ձեռքբերում<br>- Ծրագրի արդյունավետության բարձրացմանը ուղղված հետազոտություններ և այլ միջոցառումներ | | | | |
| **Տուբերկուլոզի դեպքերի ախտորոշում և դեղակայունության հսկողություն**<br>- Բուժսարքավորումների սպասարկում<br>- Թեստերի, լաբորատոր ծախսանյութերի ձեռքբերում<br>- Ախտորոշիչ սարքավորումների, ավտոմեքենաների ձեռքբերում | 421216 | 166647 | 183884 | 424197 |
| **Ռեգուլյար և դեղակայուն տուբերկուլոզի բուժում**<br>- 1-ին և երկրորդ շարքի դեղորայք<br>- Կողմնակի ազդեցության դեղամիջոցներ Բժշկական/լաբորատոր ծախսանյութեր | 616875 | 653613 | 686613 | 36445 |
| **Տուբերկուլոզով հիվանդներին** | 649364 | 657132 | 580357 | 380513 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | **սոցիալական աջակցություն**<br>- Սոցաշխատողների վերապատրաստում<br>- Սոցիալական աջակցության տրամադրում բուժման մեջ գտնվող հիվանդների բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով /հիգիենիկ և սննդային փաթեթների տրամադրում, դեղորայքի վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով բնական հյութերի տրամադրում, տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, ջեռուցման ծախսերի փոխհատուցում/ | | | | |
| | | **Հասարակության իրազեկում, լուսաբանում և ջատագովում**<br>- Տուբերկուլոզի վերաբերյալ իրազեկման նյութերի մշակում, նյութերի տպագրում, ինֆորմացիոն հոլովակների պատրաստում, հեռարձակում հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով | 8400 | 53000 | 35000 | 3648 |



| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն **604318 եվրոյին համարժեք դրամ**. |

| **Նկարագրություն** | **2012թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2013թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2014թ.** /եվրոյին համարժեք դրամ/ | **2015թ.** /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|---|
| Համակարգող խմբի աշխատավարձեր (ներառյալ հարկերը) | 128025 | 107706 | 140427 | 95926 |
| Աշխատակիցների բժշկական ապահովագրություն | 3500 | 3500 | 3500 | 3500 |
| Ավտոմեքենաների տեխնիկական պահպանման, ապահովագրության, վառելիքի ծախսեր | 6284 | 6284 | 6284 | 6200 |
| Գրասենյակային ծախսեր (կոմունալ ծառայություններ, գրասենյակային պարագաներ) | 2000 | 2000 | 2000 | 1629 |
| Տարածքի վարձակալություն | 22857 | 0 | 0 | 0 |
| Գործուղումներ | 10600 | 10600 | 10450 | 5450 |
| Աուդիտորական ծառայություններ | 5715 | 5715 | 11429 | 2737 |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի<br>- ՀՀ ֆինանսների նախարարության<br>- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության<br>- ՀՀ առողջապահության նախարարության,<br>- Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների ենթակայության բժշկական հաստատությունների (պոլիկլինիկաներ, Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր և այլ բժշկական հաստատություններ)<br>- Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն ՊՈԱԿ-ի<br>- Հայկական կարմիր խաչի ընկերություն ՀԿ-ի<br>- Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և այլ միջազգային կազմակերպությունների հետ: |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ՝<br>- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին,<br>- Հիմնադրամի տեղային գործակալին,<br>- ՀՀ առողջապահության նախարարությանը,<br>- ՀՀ ֆինանսների նախարարությանը,<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀՀ առողջապահության նախարարության
Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար

Հ. Հարությունյան

Ծրագիրը կազմեց՝
ՀՀ առողջապահության նախարարության
Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի
Ֆինանսիստ
Հեռ. 54 36 51

Ք. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1212- Ա
քաղ. Երևան

## «ԱՐԱՄԱԶԴ» ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 97 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԻՍԱՔԱՆԴ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 9-ի N 07/80-2/29905-15 ու նոյեմբերի 9-ի N C3A3-DAOB-4211, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 13-ի N 01/14/12494-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 14-ի N 1/32.2/14975-15, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 9-ի N 06/18.1/5809-15, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 02/3.1/5295-15, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 12-ի N 1/07/1328-15, ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 01/5155-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Բարեգործական որակել «Արամազդ» երիտասարդության աջակցության բարեգործական հիմնադրամի (ՀՀ, քաղ. Երևան, Մարգարյան նրբանցք, շենք N 3, բն. 319, ՀՎՀՀ՝ 01238531) կողմից իրականացվող՝ 49,926,147 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի N 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքի վերականգնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Արամազդ» երիտասարդության աջակցության բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝



«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05502622) 2015 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի N 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքի նորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 49,926,147 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Արամազդ» երիտասարդության աջակցության բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին ու Գյումրու քաղաքապետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Արամազդ» Երիտասարդության

Աջակցության Բարեգործական Հիմնադրամի

Հոգաբարձուների խորհրդի կողմից

Նախագահ՝ ______________ Վլադիկ Քոչունց

6 նոյեմբերի 2015թ

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի թիվ 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքի վերականգնում

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերականգնել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի թիվ 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքը:<br><br>Վերականգնված շենքում հետագայում նախատեսում է կազմակերպել երիտասարդական կենտրոն՝ երիտասարդության կրթական, մշակութային և գիտական առաջընթացին և զարգացմանը նպաստելու, երիտասարդության գիտելիքների, կարողությունների, հմտությունների, նրա դաստիարակության և զարգացման, կրթության միջոցների բարեփոխմանը աջակցելու, երիտասարդ սերնդի մտավոր ակտիվության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու բարոյական պատասխանատվության ձևավորմանը աջակցելու համար: Այդուհանդերձ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի թիվ 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքի վերականգնումն ինքնուրույն ծրագիր է և այն երիտասարդական կենտրոնի կազմակերպման վերոնշված ծրագրի բաղկացուցիչ մասը չի կազմում: Երիտասարդական կենտրոնի կազմակերպման ծրագիրը դեռևս մշակման փուլում է: Ծրագրի բյուջեն, իրականացման միջոցառումներն ու ժամկետները հստակեցվելուց հետո՝ այդպիսի անհրաժեշտություն առաջանալու դեպքում, այն կներկայացվի առանձին՝ բարեգործական որակելու նպատակով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային |



| | | |
|---|---|---|
| | | արտոնությունից՝ համաձայն ՀՀ Կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշմամբ հաստատված "Բարեգործական ծրագիրը բարեգործական որակելու և գրանցելու կարգի" 3-րդ կետի: |
| 3. | Բարեգործը | Հայ Մշակութային Հաստատությունը (Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգի օրենքներին համապատասխան ստեղծված և 104 N. Belmont St., Suite 200, Glendale, CA 91206 հասցեում գործող ոչ պետական (ոչ առևտրային) կազմակերպություն): |
| 4. | Ծրագիրը Կատարողը | «Արամազդ» Երիտասարդության Աջակցության Բարեգործական Հիմնադրամը (ՀՎՀՀ-ն՝ 01238531, հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Մարգարյան նրբանցք, № 3 շենք, բն. № 319, հեռախոս՝ 091 429134): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը կիրականացվի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:<br>Ծրագրի իրականացման բնագավառը՝ մշակույթի բնագավառն է: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի թիվ 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքի վերականգնման շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքն է, որը կազմում է 49.926.147 (քառասունինը միլիոն ինը հարյուր քսանվեց հազար հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ-ի): |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը |
| 8. | Ծրագրի իրականացման ժամկետները | Շինարարական կապալի պայմանագրով շինարարական աշխատանքները նախատեսված է իրականացնել 15.05.2015թ.-ից մինչև 15.06.2016թ.-ը: Այդուհանդերձ Ծրագիրը իրականացման ավարտի ժամկետ է նախատեսվում 2016 թվականի հոկտեմբերի 1-ը՝ հաշվի առնելով զանազան հավանական հանգամանքների հետևանքով շինարարական աշխատանքների ավարտի ժամկետի հետաձգման հնարավորությունը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Կիսաքանդ շենքի վերականգնումը ներառում է ստորև նշված աշխատանքների կատարումը՝ հետևյալ արժեքներով (առանց ԱԱՀ-ի) և ժամկետներում՝<br>1. Շրջանակ "3" առանցքով "Ա-Բ" հատույթով – 852,328 հազ. դրամ (2015թ.-ի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներ),<br>2. Պատեր – 2 872,442 հազ. դրամ (2015թ.-ի հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներ),<br>3. Նկուղային հարկի ծածկի ամրացում (նի2 *0,00) – 430,194 հազ. դրամ (2015թ.-ի նոյեմբեր ամիս), |

| | | |
|---|---|---|
| | | 4. Միջնորմեր – 318,336 հազ. դրամ (2015թ.-ի դեկտեմբեր և 2016թ.-ի հունվար ամիսներ),<br>5. Ծածկ 4.4. նիշի վրա – 3 252,216 հազ. դրամ (2015թ.-ի դեկտեմբեր ամիս),<br>6. Տանիք – 5 458,281 հազ. դրամ (2015թ.-ի դեկտեմբեր և 2016թ.-ի հունվար ամիսներ),<br>7. Պատուհաններ – 2 862,766 հազ. դրամ (2016թ.-ի փետրվար, մարտ, ապրիլ ամիսներ),<br>8. Դռներ – 1 995,321 հազ. դրամ (2016թ.-ի փետրվար, մարտ, ապրիլ ամիսներ),<br>9. Հատակներ – 5 106,005 հազ. դրամ (2016թ.-ի փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս ամիսներ),<br>10. Ներքին հարդարման աշխատանքներ – 8 373,082 հազ. դրամ (2016թ.-ի փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս ամիսներ),<br>11. Ներքին ջրամատակարարում – 263,256 հազ. դրամ (2016թ.-ի մայիս, հունիս ամիսներ),<br>12. Ներքին կոյուղի – 457,019 հազ. դրամ (2016թ.-ի մայիս, հունիս ամիսներ),<br>13. Ներքին ջեռուցում – 2 871,712 հազ. դրամ (2016թ.-ի մայիս, հունիս ամիսներ),<br>14. Օդափոխություն – 196,072 (2016թ.-ի մայիս ամիս),<br>15. Էլեկտրոուժային սարքավորումներ - 1 414,493 հազ. դրամ (2016թ.-ի մայիս, հունիս ամիսներ),<br>16. Ներքին էլեկտրալուսավորության վարդակներ – 4 538,812 հազ. դրամ (2016թ.-ի փետրվար, մայիս, հունիս ամիսներ),<br>17. Կենցաղային կոյուղու արտաքին ցանց - 925,830 հազ. դամ (2016թ.-ի մայիս ամիս),<br>18. Տարածքի բարեկարգում – 7 737,982 հազ. դրամ (2015թ.-ի հոկտեմբեր, 2016թ.-ի ապրիլ, մայիս, հունիս ամիսներ),<br>Այսպիսով կիսաքանդ շենքի վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են՝ ընդամենը 49 926,147 հազ. դրամ, իսկ աշխատանքները նախատեսվում է իրականացնել 9 ամսվա ընթացքում՝ 2015թ.-ի հոկտեմբերից մինև 2016թ.-ի հունիս ամիսը ներառյալ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Կապալի պայմանագրի հիման վրա ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի թիվ 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքի վերականգնման աշխատանքները կիրականացնի "Մեծն Էրիկ" |





| | | |
|---|---|---|
| | | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ-ն՝ 05502622, ՀՀ, Շիրակի մար, քաղաք Գյումրի, Մ. Խորենացի փողոց, շենք № 60/1, լիցենզիա թիվ 14084՝ տրված ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից, 01.04.2010թ.-ին):<br>Կապալի պայմանագրի գինը 49.926.147 (քառասունինը միլիոն ինը հարյուր քսանվեց հազար հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ է (առանց ԱԱՀ-ի): |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
Բեռի արժեքը իր մեջ ներառում է բեռի մաքսային արժեքը 6000 ԵՎՐՈ և բեռնափոխադրման ծախսը 3000 ԵՎՐՈ, որի դրամային արտահայտությամբ արժեքը հաշվարկվել է ըստ ԿԲ 12.08.2015թ. սահմանած փոխարժեքի /1ԵՎՐՈ=532,27 դրամ/ և բեռի արժեքը կազմել է 4790430 դրամ /ներառյալ բեռնափոխադրման ծախսը/:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1221- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/34461-15 և նոյեմբերի 10-ի N 06/3-3/34349-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 6-ի N ԱՄ/22.2/12848-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք՝ Deiamanid 50mg, 3 արկղ, 3 կգ քաշով, 163.38 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 191.77 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1217-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1222- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1084-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 07/80-2/34642-15 և նոյեմբերի 9-ի N 06/3-3/34286-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «Ձեռնարկատիրական և քաղաքացիական կրթության իրականացում» բարեգործական կրթական ծրագրի մասին» N Մ-1084-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2015 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված՝ N 1/09-15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասագրքերի, ուսումնական ձեռնարկների տպագրում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2015 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված՝ N 092/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռքբերում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01505315) 2015 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված՝ N 16-17102015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 66,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1223- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱ-ՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 07/80-2/34655-15 ու նոյեմբերի 11-ի N 06/3-3/34588-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N Մ-1085-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 9-րդ և 10-րդ կետերի 8-րդ ենթակետերում «23,171» թիվը փոխարինել «8,171» թվով.

2) ծրագրի 9-րդ և 10-րդ կետերի 15-րդ ենթակետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Վայրը ծորի մարզի թիրախային համայնքների գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի համար ՈՒԱԶ 23632-148 մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերում՝ 2015 թվականի նոյեմբեր ամսին՝ 15000 եվրոյին համարժեք դրամ արժեքով:

Մեքենան պատկանելու է «Գինիշիկ» միջհամայնքային բնապահպանական հիմնադրամին և օգտագործվելու է համայնքներից գյուղմթերքների տեղափոխման նպատակով»:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1224- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1085-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/34466-15 ու նոյեմբերի 4-ի N 06/3-3/33620-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-930-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia) N Մ-1085-Ա որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

«N 09/15-BMZ պայմանագրում» բառերից հետո կարդալ «և 2015 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված՝ N 1 լրացուցիչ համաձայնագրում» բառերը և «13,908,475» թիվը փոխարինել «16,165,890» թվով:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1225- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/34532-15 ու նոյեմբերի 10-ի N 06/3-3/34472-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 6-ի N ԱՄ/22.2/12870-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղեր՝ 30 տեղ, 365 կգ քաշով, 27,078.05 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 381,210 հնդկական ռուփի, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1157-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1226-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/34463-15 ու նոյեմբերի 9-ի N 06/3-3/34077-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N ԱՄ/22.2/12798-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռները (լաբորատոր ազդանյութեր՝ 2 տեղ, 14.5 կգ ընդհանուր քաշով, 5,031.98 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, 2 տեղ, 2.9 կգ ընդհանուր քաշով, 1,946.57 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, 1տեղ, 30 կգ ընդհանուր քաշով, 15,341.76 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, 1տեղ, 2 կգ ընդհանուր քաշով, 1,492.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, 1տեղ, 1 կգ ընդհանուր քաշով, 1,212.05 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1226-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1227-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/34442-15 ու նոյեմբերի 6-ի N 06/3-3/34049-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N ԱՄ/22.2/12803-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռները (լաբորատոր սարք՝ 1տեղ, 67 կգ ընդհանուր քաշով, 3,417.69 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, լաբորատոր սարք՝ 1 տեղ, 105 կգ ընդհանուր քաշով, 4,876.45 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, դեղեր՝ 153 տեղ, 1,457 կգ ընդհանուր քաշով, 144,929.46 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, անձեռոցիկ գլանափաթեթով 350 տեղ, 4,200 կգ ընդհանուր քաշով, 18,125.34 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1211-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշման պատճենը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ-1228-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (2)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 07/80-2/34425-15 ու նոյեմբերի 9-ի N 06/3-3/34076-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N ԱՄ/22.2/12802-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռը (թեսթ հավաքածուներ՝ 2 տեղ, 4 կգ ընդհանուր քաշով, 3,553.86 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1211-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1229 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 07/80-2/32760-15 և հոկտեմբերի 28-ի N 06/3-3/32616-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պարաֆինի (935 տեղ, 22,950 կգ ընդհանուր քաշով, 38,895.59 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է ծիսական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1230 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 2-ի N 07/80-2/33265-15 և N 06/3-3/33157-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված դիզելային գեներատորի (մեկ տեղ, 6,196 կգ ընդհանուր քաշով, 70,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1231 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 2-ի N 07/80-2/33262-15 և նոյեմբերի 4-ի N 06/3-3/33480-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված լուսատուների (3 տեղ, 669 կգ ընդհանուր քաշով, 37,110 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Գարեգին Ա կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1232 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1005-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015թվականի նոյեմբերի 4-ի N 07/80-2/33591-15 և N 06/3-3/33478-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի փողոց, 19ա ՀՎՀՀ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «ՖաբԼաբ արհեստանոց-լաբորատորիա» ծրագրի մասին» N Մ-1005-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունվարի 30-ի Մ-061-Ա, մայիսի 15-ի Մ-507-Ա և նոյեմբերի 5-ի Մ-1172-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Գաշես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04222383) 2015 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինմոնտաժային աշխատանքների իրականացում՝ 1,632,760 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1233 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N Մ-770-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 630 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Էօրնեկեան հանրակրթական դպրոցի համար համազգեստների պատվեր» ծրագրի մասին» N Մ-770-Ա որոշման 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետերում «ՀՎՀՀ՝ 01200207» բառերը փոխարինել «ՀՎՀՀ՝ 01200507» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1234 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 07/80-2/35058-15 և նոյեմբերի 12-ի N 06/3-4/34854-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայ Առաքելական եկեղեցու Ֆրանսիայի թեմի կողմից որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի (12 հատ դաշնամուր, 12 հատ աթոռ և 2 տուփ դաշնամուրի մասեր, 2,400 կգ ընդհանուր քաշով, 3,000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1235 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34830-15 և նոյեմբերի 13-ի N 06/3-3/35087-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից ձեռք բերված անասնակերը (ցորենի թեփ՝ 9,500 կգ ընդհանուր քաշով, 61,750 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 42,000 ռուսական ռուբլի, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1236 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34944-15 և նոյեմբերի 10-ի N 06/3-3/34471-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2015 թվականի նոյեմբերի 11-ին կնքված՝ N AT-AU-084-14 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ - 1237 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 նոյեմբերի 13-ի N 07/80-2/35053-15 և նոյեմբերի 5-ի N 06/3-3/33665-15 եզրակացությունները և հաշվի առնելով «Այբ» կրթական հիմնադրամի 2015 թվականի հոկտեմբերի 30-ի գրությունը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի փողոց, 19ա, ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01528652) 2015 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N 003-02/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում՝ 3,600,000 դրամի չափով և շինարարական արտադրանքի լաբորատոր փորձարկումների իրականացում՝ 2,750,000, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Այբ» կրթական հիմնադրամի
Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյանի կողմից
09 նոյեմբերի, 2015թ.

# «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցման ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրով նախատեսվում է ստեղծել «Այբ» դպրոցի երրորդ՝ Գ մասնաշենքը՝ 180 երեխայի համար: «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցումը հանդիսանում է «Այբ ավագ դպրոց» ծրագրի շարունակությունը, որը որակվել է բարեգործական ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ՝ 09.11.2012թ. N Մ - 893 - Ա, 07.06.2013թ. N Մ-436-Ա և 06.12.2013թ. N Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ: Այն ստեղծվում է ի կատարումն ՀՀ կառավարության թիվ 50Ա առ 14.01.2010թ. որոշմամբ ամրագրված «Այբ կրթական հանգույց» ծրագրի:<br>**Ծրագրի անհրաժեշտությունը**<br>21-րդ դարում երկրի մրցունակության ապահովման կարևորագույն գործոնը որակյալ կրթությունն է: Նման կրթություն տալու, ուսյալ, առաքինի, ապագան կերտելու պատրաստ սերունդ ձևավորելու նպատակով էլ ստեղծվել և զարգացվում է «Այբ» դպրոցը: Դպրոց, որը կդառնա 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի մոդել և իր դրական ազդեցությունը կունենա ողջ կրթական համակարգի վրա: Հանդիսանալով ոչ առևտրային կազմակերպություն՝ «Այբ»-ն իր գործունեությունն ու զարգացումն ապահովում է բարերարների նվիրատվությունների հաշվին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակը Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի դրույթների: Մասնավորապես՝ ծրագրի շրջանակներում Հիմնադրամի սեփական միջոցների և հանգանակությունների հաշվին արտերկրից ներմուծվող և ՀՀ-ի տարածքում ձեռքբերվող տպագիր և էլեկտրոնային ուսումնական նյութերի, մասնագետների վերապատրաստման,նախագծային, փորձաքննական, շինարարական աշխատանքների և շինանյութերի, սարքավորումների, կապուղիների, կահույքի, տեխնիկայի ազատումը մաքսային պարտադիր վճարումներից և ԱԱՀ-ից: |
| 3. | Բարեգործը | «Այբ» կրթական հիմնադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամը, որի տվյալներն են՝<br>• ՀՎՀՀ 01558429 |

| | | |
|---|---|---|
| | • Հասցեն՝ Երևան 0009, Կորյունի 19ա<br>• Հաշվարկային հաշիվ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ005-053483-001<br>• Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյան:<br>«Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.<br>1. «Այբ ավագ դպրոց» ծրագրի շրջանակներում Երևանի Այբ դպրոցի («Այբ կրթական հանգույց» հիմնադրամի) շինարարության, սարքավորումների և նյութերի ներմուծման, տպագիր և էլեկտրոնային նյութերի ձեռքբերման ծրագիրը ճանաչվել է բարեգործական՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ՝ 09.11.2012թ. N Մ - 893 – Ա, 07.06.2013թ. N Մ-436-Ա և 06.12.2013թ. N Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ:<br>2. «ԱյբԼաբ» ծրագրի շրջանակներում Երևանի Ֆիզմաթ դպրոցի Ֆիզիկայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը ճանաչվել է բարեգործական՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 14-ի N Մ-851-Ա որոշմամբ:<br>3. «ԱյբԼաբ-ուսումնական առարկայական լաբորատորիաներ-Վաղարշապատ» ծրագրի շրջանակներում Վաղարշապատի Խ. Աբովյանի անվ. # 4 հիմնական դպրոցի քիմիայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը ճանաչվել է բարեգործական՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. հուլիսի 27-ի N Մ-626-Ա որոշմամբ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսվում է Երևանում՝ Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում կառուցել, կահավորել, ուսումնական, լաբորատոր և համակարգչային սարքավորումներով հագեցնել, ուսումնական տպագիր և էլեկտրոնային նյութերով (այդ թվում՝ դասագրքեր, ուսումնական տպագիր և տեսաձայնային ձեռնարկներ) զինել «Այբ» դպրոցի երրորդ՝ Գ մասնաշենքը:<br>Ծրագրի բնագավառը՝ հանրակրթություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.994.500.000 դրամ, որը ներառում է շինարարության, սարքավորումների և տեխնիկայի ծախսերը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողները Երևանում տեղակայված ոչ պետական **«Վէմ» բարեգործական հասարակական կազմակերպությունն** ու **«Այբ կրթական հանգույց» հիմնադրամը**: «Վէմ» ԲՀԿ՝ լինելով Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեով գտնվող հողամասի և շինությունների սեփականատերը, հանդիսանում է շինարարական աշխատանքների մասով բարեգործություն ստացողը, իսկ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամը՝ լինելով ՀՀ ԿԳ նախարարության կողմից որպես դպրոց լիցենզավորված կազմակերպություն և բուն հանրակրթական գործունեություն իրականացնող, հանդիսանում է շարժական գույքի և ծառայությունների մասով բարեգործություն ստացողը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 2014թ. սեպտեմբերի 15, ավարտը՝ 2017թ. սեպտեմբերի 31, տևողությունը՝ 36 ամիս: |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը նախատեսում է «Այբ» միջին դպրոցի Գ մասնաշենքի կահավորում, սարքավորումներով և տեխնիկայով հագեցում, դպրոցական ավտոբուսների գնում, տարածքի բարեկարգում:<br>Աշխատանքները կավարտվեն 2017թ. սեպտեմբերին:<br>Նկարագրված աշխատանքներն իրականացնելու են համապատասխան ոլորտներում մասնագիտացած կազմակերպությունները, ինչպես նաև «Այբ» կրթական հիմնադրամը:<br>Միջոցառումների ծախսերը կկազմեն 1.994.500.000 դրամ, որից Շինարարություն – 1.812.400.000 դրամ, Տեխնիկա/սարքավորումներ – 94.300.000 դրամ, կազմակերպման ընդհանուր ծախսերը - 87.800.000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետևյալ ապրանքների և ծառայությունների ձեռքբերում. |

| ԸՆԴԱՄԵՆԸ (Հազար ՀՀ դրամ) | '000 AMD<br>1,906,700 |
|---|---|
| **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** | **1,812,400** |
| Այդ թվում՝ | |
| **ՀՀ-ից** | **1,512,384** |
| **Ներմուծում** | **300,016** |
| Նախագծում, փորձաքննություն, վերահսկողություն | 23,400 |
| Շինարարություն, որից | 1,809,016 |
| Հիմնակմախքի շինարարություն, այդ թվում | 806,600 |
| Նյութ | 306,640 |
| այդ թվում ներմուծում | 40,000 |
| Աշխատանք | 459,960 |
| Ներքին հարդարում, այդ թվում | 1,002,416 |
| Նյութ | 323,360 |
| այդ թվում ներմուծում | 194,016 |
| Աշխատանք | 485,040 |
| Կահավորում | 160,000 |
| այդ թվում ներմուծում | 32,000 |
| Անվտանգության համակարգեր, սերվեր | 34,000 |
| այդ թվում ներմուծում | 34,000 |
| Բարեկարգում/ցանկապատում/կոմունիկացիաներ | 20,000 |
| **ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՏԵԽՆԻԿԱ** | **94,300** |
| Այդ թվում՝ | |
| **ՀՀ-ից** | **13,320** |
| Ներմուծում | 80,980 |

| | |
|---|---|
| Տեղեկատվական համակարգեր/ուսումնական ծրագրեր | 2,300 |
| Այդ թվում ներմուծում | 1,380 |
| Տեխնիկա, սարքավորումներ | 62,000 |
| Այդ թվում ներմուծում | 49,600 |
| Դպրոցական ավտոբուսներ | 30,000 |
| Այդ թվում ներմուծում | 30,000 |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ընդհանուր ծախսերը կազմում են՝ 87.800.000 դրամ, որից.<br>Ծրագրային աշխատավարձ – 80.000.000 դրամ<br>Ծրագրային վարչական ծախսեր – 7.800.000 դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսված է համագործակցել ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ա) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:<br>բ) «Այբ»-ը կրթական հիմնադրամ է՝ ոչ առևտրային կազմակերպություն,և իր գործունեությամբ հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին ու վերահսկվում է նրա կողմից: «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են.<br>1. Տեր Մեսրոպ քհն Արամյան, նախագահ (Հայաստան)<br>2. Լևոն Ղազարյան (ԱՄՆ)<br>3. Դավիթ Յան(ԱՄՆ, Ռուսաստան)<br>4. Կարեն Մուսաելյան (ԱՄՆ)<br>5. Արտաշես Շիրիկյան (Հայաստան, Ռուսաստան)<br>6. Աշոտ Թումասյան (Ռուսաստան):<br><br>Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կտրվի ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1238 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-668-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34968-15 և նոյեմբերի 11-ի N 06/3-3/34592-15 եզրակացու-թյունները և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 627 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-668-Ա որոշմամբ (2014 թվականի մայիսի 16-ի N Մ-409-Ա և 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-056-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «1,762,123.790 դրամ» բառերը փոխարինել «2,125,578,620 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «1,672,123.790 դրամ» բառերը փոխարինել «2,035,578,620 դրամ» բառերով.

3) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 20-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1239 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/31797-15 և հոկտեմբերի 23-ի N 06/3-3/32047-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 21-ի N ԱՄ/22.2/12159-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր ախտորոշիչ թեստեր՝ 1տեղ, 15.5 կգ ընդհանուր քաշով, 10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,566 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1240 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 26-ի N 07/80-2/32286-15 և N 06/3-3/32198-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 23-ի N 1/06/1378-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի հանդբոլի ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված հանդբոլի գնդակների (600 հատ՝ 30 տեղ, 247.5 կգ ընդհանուր քաշով, 7,320 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1241 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 28-ի N 07/80-2/32499-15 և հոկտեմբերի 26-ի N 0/3-3/32196-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված օդափոխության համակարգի սարքավորման մասերը (մեկ տեղ, 40 կգ ընդհանուր քաշով, 70 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՍՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1242 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 28-ի N 07/80-2/32498-15 և հոկտեմբերի 23-ի N 06/3-3/32021-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կասկո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01558994) 2015 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 17,436,730 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2015 թվականի N Մ- 1243 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 2-ի N 07/80-2/33202-15 և N 06/3-4/33059-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

